Ճանապարհորդություն դեպի ապագա

СириуС

Омск

УДК 141.339
ББК 87.7+86.4

М59 Микушина,Т.Н., Ильина, Е. Ю.

Путешествие в будущее

авт.: Т.Н. Микушина, Е.Ю. Ильина. – Омск: Издательский Дом «СириуС», 2020. – 136 с. – ISBN 978-5-6043718-3-1.

Ձեր առջև մի անսովոր գիրք է: Այն ստեղծվել է, որ ներկայիս անուրախ իրադարձությունների ֆոնին բարձրացնի տրամադրությունները, լավատեսություն ներշնչի, և երազենք միասին:

Հեղինակներն են գրող Ելենա Իլյինան և փիլիսոփա, միստիկ Տատյանա Միկուշինան:

21-րդ դարի երկու տասնամյակների ընթացքում Տատյանա Միկուշինան միանգամայն հրաշակերպ, միստիկական ձևով գրի է առել Ուղերձներ, որ մեր աշխարհին են եկել Բարձրագույն, Աստվածային Աշխարհից: Գրքի նպատակն է հարյուրավոր ուղերձներից ընտրել այն առանցքային պահերը, որ անհրաժեշտ են հենց հիմա, երբ մոլորակը Անցում է կատարում դեպի՝ Ջրհոսի Դարաշրջան:

Հեղինակները հուսով են, որ գիրքը կօգնի հստակ ձևի մեջ ստանալ այն գիտելիքները, որ անհրաժեշտ են, որպեսզի ճիշտ կողմնորոշվենք աշխարհում կատարվող գործընթացներում և ճիշտ որոշումներ կայացնենք, որոնք կապահովեն դյուրին և անվտանգ անցումը ապագային:

Գիրքը հասցեագրված է ընթերցողների ամենալայն շրջանակներին: Այն հատուկ հետաքրքրություն է ներկայացնում երիտասարդության համար:

ISBN 978-5-6043718-3-1

© Т.Н. Микушина, Е.Ю. Ильина, 2020, текст
© ООО ИД «СириуС», 2020
© Т.В. Мартыненко, 2020, обложка

Բովանդակություն

Ընթերցողներին 7

Եկել է Նոր Դարաշրջանը 11

Սեն Ժերմենի գաղտնիքը 15

Արժանապատվորեն մտնենք Նոր Դարաշրջան 19

Դեպի ուր ուղղված է մեր ուշադրությունը, այնտեղ էլ հոսում է մեր էներգիան 27

Ո՞ւր ենք ուղղելու փոխադրիչը 28

Какая связь между нашим мышлением

и катаклизмами? 31
Сколько нужно позитивно настроенных людей?..... 34

Мы сами создаём своё будущее 37
С чего же начать?.....37
Начинаем тренировки!.....39

Вперёд к Мечте! 45

Новое мышление переходит в действие 55
Как действовать?.....56
Что делать, если наши внутренние перемены встречают внешнее сопротивление?.....60
Первые победы 62

Конец Старого Мира предрешён.....65
Старое и новое мышление.....67
Создание «козлёночков» 69

Истинная и ложная вера 85

Любовь безусловная и любовь эгоистическая 93

Три кита Мироздания..... 103

Высший Нравственный Закон..... 104

Закон Кармы 113

Закон реинкарнации 123

Заключее..... 131

GER
2022
GER
2022
GER
2022
AUS
615
AUS
615
AUS
615

Ընթերցողներին

Թանկագի՛ն բարեկամներ,

Ձեր առջև մի անսովոր գիրք է: Այն ստեղծված է, որպեսզի ներկայիս անուրախ իրադարձությունների ֆոնին բարձրացնի տրամադրությունը, լավատեսություն ներշնչի և երազենք միասին:

Գրքի հեղինակներն են գրող Ելենա Իլյինան և փիլիսոփա- միստիկ Տատյանա Միկուշինան:

21-րդ դարի առաջին երկու տասնամյակներին Տատյանա Միկուշինան միանգամայն հրաշալի կերպով գրի է առել Ուղերձներ, որ մեր աշխարհն են եկել Բարձրագույն, Աստվածային աշխարհից: Սրանք այն էակների Ուղերձներն են, որ անցել են երկրային էվոլյուցիան և գտնվում են Կեցության Բարձր պլաններում: Նրանք իրենց անվանում են Իմաստության Տիրակալներ կամ

Համբարձյալ Դասեր, ու, ըստ էության, հանդիսանում են մեր հոգածու Օգնականները և Ուսուցիչները:



Գրքում հատվածներ են բերված Սեն Ժերմենի, Հաութամա Բուդդայի, Սիրեցյալ Գուան Ինյի, Տեր Մայտրեյայի, Մեծ Աստվածային Ուղղորդիչի, Լանելլոյի, Սիրեցյալ Ալֆայի, Սիրեցյալ Էլ Մորիայի, Տեր Շիվայի, Մովսեսի, Սիրեցյասլ Սուրիայի, Սանատ Կումարայի, Տեր Հիսուսի, Անվերապահ Սիրո Ներկայության, Սիրեցյալ Ջվալ Կուլիի, Սիրեցյալ Զրադաշտի, Սիրեցյալ Կութհումիի, ԵՍ ԵՄ, ՈՐ ԵՄ-ի, սիրեցյալ Իլարիոնի, Սիրեցյալ Սերապիս Բեյի, Տեր Լանտոյի, Հզորագույն Հաղթանակ Տիեզերական էակի ուղերձներից:

Տիրակալների բոլոր ուղերձները հավաքված են մի հսկայական գրքում՝ «Իմաստության Գրքում», որն ունի հազարից ավելի էջեր, և որոնց հեղինակներն են հանդիսանում ավելի քան 50 Լույսի Էակներ:

Տիրակալների բոլոր Ուղերձնորը կարելի է գտնել «Сириус»: **sirius-ru.net կամ sirius-net.org**. կայքում:

«Ճանապարհորդություն դեպի ապագան» գրքի նպատակն է եղել հարյուրավոր Ուղերձներից ընտրել այն հանգուցային պահերը, որ անհարժեշտ են հենց հիմա, երբ մոլորակը Անցում է կատարում դեպի Նոր Դարաշրջան՝ Ջրհոսի Դարաշրջանը:

Հեղինակները հուսով են, որ գիրքը կօգնի պարզ ձևի մեջ ստանալ այն գիտելիքները, որ անհրաժեշտ են ճիշտ կողմնորոշվելու համար այն գործընթացներում, որ կատարվում են աշխարհում և ճիշտ որոշումներ կայացնելու, որ կապահովեն թեթև և անվտանգ անցումը դեպի ապագա:

Խմբագրության կողմից

Նոր դարաշրջան է սկսվել

Ժամանակակից շատ աստղագետներ հաստատում են, որ 21-րդ դարի սկիզբը կապված է Ջրհոսի Դարաշրջանի հետ: Ջրհոսի տարերքը օդն է: Բավական չէ, որ օդի տարերքը շարժուն է, փոփոխական և ընկալունակ է ազդեցությունների նկատմամբ, որ տանում է դեպի քարացած հայացքների և կացութաձևերի խախտում: Բայց հենց անցումը Նոր Դարաշրջանին կապակցված է անկայունության և քաոսի հետ: Սա է պատճառը, որ մարդկանց համար հեշտ չէ կյանքի այսօրվա պայմաններում ապրելը:

Բայցևայնպես կարելի է տարբեր կերպ

վերաբերվել փոփոխություններին: Այդ փոփոխություններն անխուսափելի են և՝ էվոլյուցիայի կողմից նախատեսված:

Իսկ զարգացման Աստվածային ուղին ՄԻՇՏ ենթադրում է փոփոխություններ՝ դեպի լավագույնը: Արարաչի կամքին մենք չենք կարող հակառակ գնալ

Մեզ մնում է միայն մի բան՝ փոխել մեր վերաբերմունքը կատարվող իրադարձությունների հանդեպ: Բարձրագույն ուժերը մեզ տառացիորեն մղում են մտածողության արագ վերակառուցման, որպեսզի մենք հնարավորինս արագ դուրս պրծնենք հին, իր դարն ապրած համակարգից և ընթանանք դեպի այն հնարավորությունները, որ մեզ համար բացվում են Ուղու նոր շրջանում:

Սիրեցյալ Սեն Ժերմենը՝ գալիք Դարաշրջանի Հիերարխը, դեռևս 2011 թվականի դեկտեմբերի 30-ի իր Ուղերձում ասել է. «Համարձակորեն մուտք գործեք Նոր Դարաշջան՝ Ջրհոսի Դարաշրջան»:

«…ես այսօր եկել եմ՝ ձեզ ասելու, որ վերջապես նոր էներգիաները՝ Ջրհոսի գալիք Դարաշրջանի էներգիաները ամբողջությամբ և լիարժեքորեն մտել են իրենց իրավունքների մեջ:

…Դուք կզարմանաք և կվհատվեք: Որովհետև **ամեն ինչ սկսելու է փոխվել**: Ես

եկել եմ ձեզ իրազեկելու այն մասին, **որ պահի հանապազօրյա անհրաժեշտությունն է փոփոխությունների առջև ձեր պատրաստականությունը:**

Նրանք, ովքեր կարող են իրենց գիտակցությունը պահել Ուրախության, Սիրո, ներդաշնակության և երջանկության թրթռանքների վրա, կարող են լիարժեքորեն վայելել գալիք փոփոխությունները: Ձեզանից նրանք, ովքեր ըստ հին սովորությունների տրամադրված են անբարյացակամության, կասկածանքի, վախի, կարող են մոտ ժամանակներս հեշտությամբ հրաժեշտ տալ անցյալ դարաշրջանի այդ էներգիաներին:

<...> ... այն ամենը, ինչ կթրթռա Ուրախության, Սիրո, Աստվածային Ազատության տատանումներից, գալիք տարում և առաջիկա տարիներին կստանա Երկնքի աննախադեպ աջակցությունը: Ամեն ինչ, որ հրաժարվում է ընդունել նոր էներգիաները, աստիճանաբար կզրկվի աշխարհում իր ունեցած արտոնյալ վիճակներից: Հին ինստիտուտները, հասարակության ինստիտուտները, որ հիմնված են անցյալ էներգիաների և հեռացող դարաշրջանի թրթիռների վրա, աստիճանաբար իրենց տեղը կզիջեն նոր

ինստիտուտներին»:

Մեզ այդ մասին են պատմում նաև աստղագետները: Նրանք հաստատում են, որ ներկայումս դրվում են Նոր Աշխարհի հիմքերը: Հատկապես, սկսած 2020 թ.-ի մարտից մինչև 2023 թվականի մարտը կսկսվի ինչպես մեր, այնպես էլ բոլոր միությունների և ինստիտուտների արագ հոգևոր տրանսֆորմացիան: Կառավարման բոլոր համակարգերը կմնան անցյալում: Այս պատճառով աշխարհի զարգացած երկրների կառավարությունները պետք է զգուշություն և ճկունություն դրսևորեն, այլապես նրանց սխալ գործողությունները կարող են հանգեցնել սոցիալական պայթյունների և իշխանության ճգնաժամի:

Անկանխատեսելի տուրբուլենտության ժամանակը, ըստ աստղագետների, կտևի երեք տարի: Արտաքուստ սա քաոս կլինի, սակայն մարդկությունը կմղվի հետագա աճի և զարգացման, մարդիկ կսկսեն արթնանալ ու հասկանալ, թե ո՞րն է Արարչի մտադրությունը. նրանց համար ավելի հեշտ կլինի վտանգավոր գոտին հաղթահարելը:

Սեն Ժերմենի գաղտնիքը

Հեշտ է ներդաշնակության և ուրախության վիճակում լինելը, երբ մեզ բարենպաստ պայմաններ են շրջապատում: Բայց ի՞նչ անել, երբ քո եկամուտները հաստատուն չեն, երբ արտաքին հանգամանքների հետ հաղորդակցվելու միջոցներդ սահմանափակ են, երբ շուրջդ այնքա՛ն բացասական բան կա: Ինչպե՞ս չընկնել վհատության և հուսահատության գիրկը: Սակայն անբարենպաստ պայմանները մշտապես ներկա են մեր կյանքում: Բայց մենք միշտ դրանք ընկալելու ընտրության հնարավորություն ունենք:

Եվ Տիրակալ Սեն Ժերմենը մեզ համար բացում է գաղտնիքը՝ ինչպե՞ս վարվել:

«Ես ձեզ համար մի մեծ գաղտնիք կբացեմ: Թեև այդ գաղտնիքն առանց ինձ էլ հայտնի է ձեզ: Խսքս այն մասին է, որ ինքներդ՝ յուրաքանչյուրն ինքն է իր ներսում որոշում՝ ընկնե՞լ գիտակցության բացասական վիճակի մեջ, թե՞ ոչ: Գալիս է պահը, երբ դուք ձեր ներսում որոշում եք՝ ենթարկվե՞լ վատ տրամադրությանը, թե՞ ոչ, պախարակե՞լ այս կամ այն մարդուն, թե՞ ոչ, նեղանա՞լ, թե՞ ոչ, թախծե՞լ, թե՞ ոչ:

Դուք և միայն դուք եք որոշում կայացնում: Եվ երբ որոշում եք ենթարկվել հին էներգիաների ազդեցությանը, ապա գլխովին թաղվում եք դրանց

մեջ, և նման դեպքում նույնիսկ ե՛ս չեմ կարող ձեզ օգնել: Ուստի՝ հենց որ բացասական էներգիան վրա է հասնում, անմիջապես օգնության խնդրանքով դիմե՛ք ինձ: Ես կօգնեմ, որ վեր հանեք ձեր գիտակցությունը: Ես կառաքեմ ձեզ իմ ժպիտը և կմեկնեմ իմ օգնության ձեռքը՝ ձեր կյանքի ամենադժվար պահին: Ահա, այդպես մենք կհաղթահարենք հին էներգիաները: Եվ քանի որ բնությունը դատարկություն չի սիրում, անմիջապես ձեր գիտակցության ամեն մի բացասական վիճակի փոխարեն կոչ հղեք դրա հակառակի՝ գիտակցության դրական վիճակի համար:

Վախը ձեր աշխարհի ամենամեծ չարիքն է: Կատարյալ Սիրով կարելի է փոխարինել ցանկացած վախ: Ընդհանուր առմամբ, ամեն մի բացասական հատկանիշ կարելի է լուծել այդ համապիտանի լուծիչով: Գործնականում ձեր շրջապատի բոլոր բացասական էներգիաները կարելի է կլանել ու չեզոքացնել Սիրո էներգիայով:

Ուրախությունն ու սերը ձեզ այցելում են այն ժամանակ, երբ ամուր է ձեր հավատը. Երբ ձեր գիտակցությամբ դուք հենվում եք Աստծո և Համբարձյալ Դասերի վրա» **(30-ը դեկտեմբերի 2011 թ.).**

Տիրակալ Սեն Ժերմենը կոչ է անում մեր կյանքի դժվարին պահերին դիմել իրեն: Իմաստության Տիրակալները միշտ մեզ

առաջարկում են իրենց Օգնության Ձեռքը:

Եվ մեր յուրաքանչյուր օգնության կոչ կամ խնդրանք միշտ լսելի կլինի:

NE
SE
SW
NW
S
NORT
OCEANVS
ÆTHIOPIA
TROPICVS
MARE

Արժանապատ վորեն մտնենք Նոր Դարաշրջան

Երբ մենք ուղևորվում ենք ճամփորդության, չենք կարող ճշգրիտ ասել, թե առջևում մեզ ինչ է սպասում: Դրա համար էլ մենք ջանում ենք նախապատրաստվել՝ ուսումնասիրում ենք երթուղին, կարդում ենք տուրգործակալությունների ուղեցույցները, դիմում ենք փորձառու զբոսավարի ծառայությանը: Իսկ հիմա պատկերացրե՛ք, որ մեզ առաջարկել են հսկայական երթուղի, որ կոչվում է «Նոր Դարաշրջան»: Ընդ որում հնարավոր չէ խուսափել ճամփորդությունից: «Երկիր Մոլորակ» կոչվող նավն արդեն սկսել է շարժվել և կարող է միայն

մի ուղղությամբ լողալ՝ նոր ու անհայտ:

Մենք արդեն ապրել ենք «անդառնալիության կետը», երբ շունչներս պահած 2012 թվականին սպասում էինք աշխարհի վերջին: Եվ այժմ մեզ միայն մի ելք է մնում՝ տրվել արկածների կյանքին և գոնե մոտավորապես հասկանալ, թե ի՞նչ են ներկայացնում իրենցից այդ արկածները:

Ահա և մեր զբոսավարը՝ առույգ և մշտապես լավատեսորեն տրմադրված Սեն Ժերմենը, Նոր Դարաշրջանի Հիերարխը: Դե նա գիտի, թե մեզ ի՞նչ է սպասում, և ինչպես կարող ենք լավագույնս հաղթահարել նոր երթուղին: Նա կարողանում է ոգևորել և քաջալերել նրանց, ովքեր անհամարձակ են առաջիկա ճամփորդությունից առաջ:

«Նոր Դարաշրջանն արդեն թևակոխել է իր իրավասությունների շրջանը:

Եվ ես՝ որպես նրա Հիերարխ, ուզում եմ ձեզ հավատացնել, որ մարդկությունը միանգամայն պատրաստ է իր գիտակցությունը փոխելու ճանապարհով իրականացնելու անցումը դեպի Նոր Դարաշրջան: Դուք տարակուսանքի մեջ եք , քանի որ ձեզ թվում է , թե ձեր շուրջը ոչինչ չի փոխվել, և ամեն ինչ առաջվանն է: Դա այդպես չէ, սիրեցյալնե՛ներս: Եվ համարձակվում եմ ձեզ հավատացնել, որ էներգիաների համաշխարհային փոփոխություն է տեղի ունեցել Երկիր մոլորակի վրա:

Իհարկե ձեզանից ոմանք պատրաստ չեն

ընդունելու նոր էներգիաները: Շատերը փորձում են վերադառնալ անցյալ, որտեղ իրենց հարմարավետ էին զգում: Սակայն, սիրեցյալնե՛ր, իսկապե՞ս այդքան լավ էր ամեն ինչ: Եվ արդյո՞ք անցյալի նկատմամաբ ձեր կարոտախտը նույն վախը չէ ապագայի նկատմամբ:

Ուրախությունը միշտ պետք է ձեզ հետ լինի: Ձեր էությունը պետք է բաց լինի փոփոխությունների առջեւ:

Մի՞թե ձեզ հետաքրքիր չէ իմանալը, թե ի՞նչ է պատրաստել ձեզ համար Նոր Դարաշրջանը:

Նոր դարաշրջանում տեղ չեն ունենալու այնպիսի եսասիրական երեւույթներ, ինչպիսիք են անհանդուրժողականությունը, արատը, ատելությունը եւ անբարեհաճությունը:

Նոր Դարաշրջանին բնորոշ են լինելու հանդուրժողականությունը, ազատությունն ու անկախությունը:

Անկախություն՝արտաքին հանգամանքներից: Դուք առավել ազատ ու վճռականորեն կկարողանաք դրսեւորել ձեր Աստվածային բնույթը: Սակայն, այն ամենը, ինչ հակասում է Աստվածային Օրենքին, իր ճանապարհին ավելի ու ավելի մեծ դժվարությունների կհանդիպի:

Եվ եթե դուք կապված եք անցյալին, եթե դուք վարժվել եք վախի մեջ ապրելուն, ապա **դուք ստիպված եք լինելու հրաժեշտ տալ ձեր սովորություններին: Անհապաղ:**

Եվ հիմա դուք պետք է վճռականորեն մտորեք այն մասին, թե հենց ձեր մեջ ի՞նչն է, որ չի համապատասխանում ժամանակի պահանջներին:

Եսասիրությունը՝ իր բոլոր դրսեւորույթներով, պետք է ջնջվի համագործակցությամբ, աշխարհի ճակատագրի եւ հարազատ մոլորակի ճակատագրի համար կոլեկտիվ պատասխանատվությամբ: Վախը, ինչպես էլ որ այն արտահայտված լինի, պետք է փոխարինվի վաղվա հանդեպ վստահությամբ եվ արտաքին հանգամանքներից անկախությամբ:

Երբ դուք ձեր կյանքն անքակտելիորեն **կապում եք Աստծո եւ Տիրակալների հետ**, այդ ի՞նչն է, որ կարող է կանգնել ձեր ճանապարհին:

Ցանկացած խոչընդոտ, դժվարություններ դուք հեշտությամբ կհաղթահարեք: Եվ ձեր երեկվա կենսակերպի այն «դինոզավրերը», որ փորձում են կառչել անցյալից, ստիպված կլինեն լքել համաշխարհային բեմահարթակը: Նոր մարդիկ, որոնց աշխարհայացքը համապատասխանում է Նոր Դարաշրջանին, կգան փոխարինելու կառավարիչների հին սերնդին: Եւ համաշխարհային կառավարման մեջ շատ շուտով տեղի կունենան այն

փոփոխությունները, այն տեղափոխությունները, որոնք թույլ կտան Աստվածային սկզբունքները կիրառել ավելի ու ավելի շատ թվով երկրներ կառավարելու մակարդակով:

...**Նոր դարաշրջանին բնորոշ կլինի դրական ամեն ինչի ակնթարթային տարածումը, մի բան, որ տեղի կունենա երկրագնդի ամենատարբեր անկյուններում՝ մարդկության լավագույն ներկայացուցիչների ուղեղներում:**

Ոչ միայն համացանցի շնորհիվ՝ առաջադեմ ամեն ինչ ակնթարթորեն կտարածվի երկրագնդի ամբողջ տարածքով մեկ: Համացանցի գյուտին նման մի բան, որը սակայն Երկիր մոլորակի նուրբ պլանում կգործի հենց հիմա:

Դա **դրական մտածողության համաշխարհային ցանցն է**: Սա համաշխարհային ցանց է, **որում միայն Աստվածային սկզբունքները եւ մեթոդներն են, որ տարածվում են լույսի արագությամբ՝ ամբողջ աշխարհով մեկ:** Դուք առանց ժամանակ կորցնելու կարող եք միանալ այդ համաշխարհային ցանցին: Թույլտվությունը ես հիմա ձեզ կտամ:

Ձեր միացման մուտքաբառն է՝ Նոր Դարաշրջան: Ձեր միացման գաղտնաբառն է՝ Գիտակցության Նոր Մակարդակ:

Հենց որ դուք ձեր էության ներսում լրացնեք նոր համաշխարհային ցանց մուտք գործելու համար անհրաժեշտ տվյալները, կարող եք օգտվել այդ ցանցի բոլոր առավելություններից:

Ձեր գիտակցությունը՝ ձեր Աստվածային գիտակցությունը նուրբ ոլորտում փոխազդեցության մեջ կմտնի նմանօրինակ նուրբ գիտակցությունների հետ, որոնք մղված են դեպի Աստված և նվիրված են Վեհապետերին: Եվ այս նոր համամոլորակային ցանցի մասնակիցների թվով բազմապատկվելով, նոր գիտակցությունը առավել հաջողությամբ կսկսի տարածվել Երկիր մոլորակով մեկ:

Ես ձեզ հետ եմ:

Մենք միասին ենք:

Արժանապատվորեն մտնենք Նոր Դարշրջան:

Հառա՛ջ»: (Սեն Ժերմեն 24 դեկտեմբերի 2012 թ.).

Եվ այսպես, ոգևորիչ ճառն արտասանված է: Մեզ համար նախատեսված է վերափոխումների վիթխարի մի ծրագիր: Պարզվում՝ մեզ չի հաջողվի ձեռները ծալած նստել, ստիպված ենք լինելու գործել: Ինչի՞ց սկսել, ինչպե՞ս մոտենալ խնդրին:

Հեշտ է ասելը՝ վաղվա օրվա մեջ վախը փոխարինել վստահությամբ, և՝ անկախ արտաքին հանգամանքներից, երբ այդ հանգամանքները ամեն կերպ աշխատում են մեզ զրկել վստահությունից, ավելի ու ավելի զրկել մեզ ազատությունից

Եվ ինչպե՞ս հասկանալ , թե ո՞րն է իսկական ազատությունը: Եվ ինչպե՞ս հրաժեշտ տալ հին, սիրելի սովորություններին, ձեռք բերել գիտակցության նոր մակարդակ: Եվ ընդհանրապես, ո՞րն է գիտակցության նոր մակարդակը:

Եվ Ի՞նչ կպատահի մեզ, երբ մենք միանանք համամոլորակային դրական գիտակցությանը:

Հարցերը շատ են: Պատասխաններն, ինչպես երևում է, պետք է գտնել հընթացս: Հենց դրանով էլ կզբաղվենք:

Դեպի ուր ուղղված է մեր ուշադրությունը, այնտեղ էլ հոսում է մեր էներգիան

Դուք պատրա՞ստ եք ճամփա ընկնելու: Ուրեմն, առաջին հերթին գրանցվում ենք: Սեն Ժերմենն արդեն հաղորդել է մուտքաբառը՝ Նոր Դարաշրջան, և՝ գաղտնաբառը՝

Գիտակցության նոր մակարդակ: Բայց ահա դրական մտածողության համերկրային ցանց մուտք գործելու համար մեզ հարկավոր չեն որևէ կարգի էլեկտրոնային կրիչներ. բավական է մտքում կամ բարձրաձայն արտահայտեք նոր միավորման մասը դառնալու ձեր մտադրությունը:

Եվ այսպես, մոտքը արել ենք: Օհո՛: Այստեղ որքա՛ն ծավալուն է ամեն ինչ, որքա՛ն գեղեցիկ ու ներդաշնակ: Ամենուրեք բարյացակամ մարդիկ են: Ամեն ինչ լեցուն է բացսրտությամբ, բարեսիրությամբ, յուրաքանչյուր մարդու հաջողությամբ ուրախանալով: Եվ մեզ դիմում են ոչ այլ կերպ, քան «սիրեցյալներ» ասելով:

Մեր հայացքի առջև ի հայտ են գալիս վազող տողեր.

«Սիրեցյալնե՛ր, տեղի է ունենում հենց այն, ինչ դուք թույլ եք տալիս ձեր գիտակցության մեջ».

«Դեպի ուր ուղղված է ձեր ուշադրությունը, այնտեղ էլ հոսում է ձեր էներգիան»

«Դուք ազդեցություն ունեք այն ամենի վրա, ինչ ձեզ շրջապատում է»:

«Ձեր էության ներսում կա ներկան և ապագան կառավարելու կենտրոն»:

«Դուք՝ ինքներդ կարող եք կարգավորել մոլորակի փոփոխությունների ընթացքը: Դրա համար պահանջվում է ձեր կենտրոնացումը դրականի վրա, Աստծո վրա, կեցության Բարձրագույն ոլորտի վրա»:

Ա՛յ քեզ բան: Ուրեմն մենք՝ ինքներս կարող ենք կառավարել ներկան ու ապագա՞ն: Բայց ինչպե՞ս է դա կատարվում»:

Դեպի ո՞ւր շրջենք հոսանքափոխիչը

Այս համամոլորակային ցանցում ամեն ինչ այնքան հրաշալի է կարգավորված, որ հենց մեր մեջ հարց է առաջանում, անմիջապես գալիս է պատասխանը:

«Մի՛ ընդգրկվեք գիտակցության բացասական վիճակների մեջ, ձեր գիտակցությունը կենտրոնացա՛ծ պահեք դրականի վրա, ձեր կյանքից հեռացրե՛ք բոլոր ոչ աստվածային երևույթները և ձեզ շրջապատե՛ք լուսավոր Աստվածային

կերպարներով:

Վերածվում եք հենց նրան, ինչ կլանում եք:

Եթե առանց մտածելու ձեզ դնում եք տեղեկատվության հոսքերի տակ, դուք դառնում եք այն բացասականի փոխադրամիջոցներ, որ տիրաժավորում են զանգվածային լրատվամիջոցները:

Հենց որ բացասականը բույն է դնում ձեր գիտակցության մեջ, շատ չանցած՝ այն այլևայլ բացասական դրսևորումներով նստվածք է տալիս ֆիզիկական ոլորտում:

Այսպիսով բացասականը վերարտադրում է ինքն իրեն:

Սակայն նույն կերպ **դրականը կարող վերարտադրել իրեն:**

Երկրագնդի վրա տեղի ունեցող բոլոր գործընթացների կառավարման մեխանիզմը ձեր էության ներսում է: Ձեզանից յուրաքանչյուրի մեջ գոյություն ունի հոսանքափոխիչի պես մի բան, որը կամ ձեզ ստիպում է ընդունել Աստվածային որոշումները, կամ էլ ընթանալ անաստվածության ճանապարհով

Եվ ամեն օր դուք մի քանի անգամ կարող եք միացնել ձեր հոսանքափոխիչը կամ Աստվածային կամ անաստվածության ուղղությամբ»: (Հաուրթամա Բուդդա, 24 հունիսի, 2014 թ.).

Ի՞նչ կապ կա մեր մտածողության և կատակլիզմների միջև

Վեհապետները պնդում են, որ ուղիղ և **մշտական կապ կա մարդկանց գիտակցության եւ մոլորակի վրա տեղի**

ունեցող տարբեր աղետների միջև:

«Երբ մարդկանց գիտակցությունն անկում է ապրում, կատակլիզմները մեծանում են: Սա ամենայն կենդանության փոխկապակցվածության գործընթացի մասն է: <...>

Ինչպես կարելի է նկատել աղետների քանակից, հրաբուխների ժայթքումները, անոմալ եղանակային պայմանները, տարեցտարի ավելանում են: Ու քանի որ կատակլիզմները, որ տեղի են ունենում այժմ, առաջացել են գիտակցության այն մակարդակի հետևանքով, որ մարդկությունն ունեցել է մի քանի տարի առաջ, նույնիսկ մի քանի տասնամյակ առաջ, դժվար չէ կանխատեսել ապագայում կատակլիզմների, վթարների և այլ դժբախտությունների և հիվանդությունների աճի շարունակությունը:

Միակ ելքը այս փակուղային և չհուսադրող իրավիճակից մարմնավորված մարդոկության գիտակցության արագ վերափոխումն է: **Արագ, որակյալ դրական ցատկը, մարդկության հիմնական զանգվածի գիտակցության նոր աստիճանը:.**

Սա ցանկալի և **միանգամայն հասանելի նպատակակետ է...**

Որքան շատ լինեն մարդկային այն

անհատակությունները, որ կարողանում են հավասարակշռել իրենք իրենց, շրջապատի մարդկանց և հանգամանքները, այնքան արագ մարդկությունը կմտնի հավասարակշիռ, հաստատուն զարգացման միջանցքը» (Սիրեցյալ Գուան Ին, 24 հունիսի, 2011 թ.):

Այսպիսով մենք՝ ինքներս ենք ստեղծում երկրաշարժներն ու ջրհեղեղները՝ մեր նսեմ ցանկություններով, վախերով, զայրույթով, վատ մտքերով:

Ուրեմն ի՞նչն է պատճառը, որ զանգվածային տեղեկատվության միջոցները միայն բացարձակ բացասականն են տարածում: Նրանք ուզում են, որ մե՞նք ստեղծենք այսպիսի ապագա: Որ մենք ապրենք միջպետական կոնֆլիկտների, կատակլիզմների և համավարակի մե՞ջ:

Վախի մեջ ապրող մարդկանց հեշտ է կառավարելը: Այդպիսի մարդիկ կորցնում են իրադարձությունները սթափ տարբերակելու, վերլուծելու ունակությունը և ստրկական հեզությամբ կընդունեն յուրաքանչյուր գաղափար, որ կառաջարկի իշխող վերնախավը: Բայց մեր ինչի՞ն է պետք այսպիսի ապագան:

Եթե մեր գիտակցությունը կապված է այն

ամենի հետ, ինչ կատարվում է մոլորակի վրա, ուրեմն՝ **մենք՝ ինքներս կարող ենք կարգավորել այս գործընթացները**: Հիշո՞ւմ եք: Մեր էներգիան հոսում է այն ուղղությամբ, դեպի ուր ուղղված է մեր ուշադրությունը:

Դրականորեն տրամադրված մեկ մարդ կարող է լավացնել իր ընտանիքի կամ ոչ մեծ կոլեկտիվի մթնոլորտը: Սրանում մեկ անգամ չէ, որ համոզվել ենք: Իսկ եթե այդ մարդկանց թիվը մեծ լինի՞: Այդ դեպքում նրանք կարող են բարելավել վիճակը իրենց քաղաքում, իրենց երկրում և նույնիսկ ողջ մոլորակի վրա: Որքան շատ լինեն դրական մարդիկ, այնքան տարեցտարի ավելի լավն են դառնում եղանակային պայմանները:

Դրական տրամադրված քանի՞ մարդ է հարկավոր

Երբ ինչ-որ գաղափար տիրապետում է երկրի բնակչության կրիտիկական տոկոսի վրա, այն թափանցում է ազգի կոլեկտիվ անգիտակցականի մեջ: Եվ փաստորեն որոշում է իրադարձությունների ապագա ողջ ընթացքը:

Եվ այնուամենայնիվ, ո՞րն է այդ կրիտիկական տոկոսը:

Ու դարձյալ մենք ստանում ենք մեր հարցի պատասխանը:

«Երկիր մոլորակի մարդկության թեկուզ մեկ

տոկոսի գիտակցության փոփոխությունը ունակ է լիովին փոխելու էվոլյուցիայի ընթացքը մոլորակի վրա» (Վեհապետ Մայտրեա, 13 սեպտեմբերի, 2006 թ.).

Պարզվում է՝ իրադրությունը փոխելու համար բավական է մարդկանց 1%-ը: Պատկերացնենք ավելի կոնկրետ թվերով:

Եթե ձեր քաղաքը 1 մլն բնակիչ ունի, ապա միլիոնի մեկ տոկոսը կազմում է 10000 մարդ:

Եթե Ռուսաստանի պես մի երկրում ապրում է 147,5 միլիոն մարդ (ըստ պաշտոնական տվյալների), ապա մեկ տոկոսը կկազմի մոտ 1,5 մլն: Երկրագնդի 7 միլիարդ բնակչության մեկ տոկոսը կազմում է 70 մլն մարդ: Հըմ, այո՛… Երկրի և ամբողջ մոլորակի ծավալով այս թվերն արդեն իսկ քիչ չեն: Սպառազինությունների մրցավազքով, տնտեսական ճգնաժամով, համավարակով բռնված մոլորակի վրա որտե՞ղ գտնել 70 մլն դրական տրամադրված մարդ: Կամ գոնե 1 ու կես միլիոն հաստատապես բարյացակամ մարդ Ռուսաստանում: Ընդ որում մեր իմաստուն Ուսուցիչները գտնում են, որ այս թիվը միանգամայն մատչելի է:

Ինքներս ենք ստեղծում մեր ապագան

Դրականորեն: Եթե ուզում ենք մեր շրջակա իրականությունում փոփոխություններ տեսնել, մենք պետք է որակապես փոխվենք մեր կյանքի յուրաքանչյուր օրվա ընթացքում:

Իսկ ինչի՞ց սկսել

Վեհապետների խորհուրդները բավականին պարզ են ու մատչելի: Ահա, օրինակ, բացասականից ազատվելու ամենահասրակ միջոցը՝ ձեր ուշադրության էներգիան մի՛ ուղղեք այդ կողմը: Ինքներդ ձեզ շրջապատե՛ք գեղեցիկով՝ դրա ցանկացած դրսևորման մեջ:

«... կա մի պարզ հնարք, որով կարող եք լավացնել ձեր վիճակը: Անջատե՛ք բոլոր հեռուստացույցները: Տոն մի՛ տվեք ձեր աշխարհի բացասական դրսևորումներին վերաբերող խոսակցություններին: Ձեր ուշադրությունը կենտրոնացրե՛ք միայն դրական բաների՝ ծաղիկների, բնության, կենդանիների, արևի, Վեհապետների պատկերների վրա: Տանը և աշխատանքի վայրում ձեր շուրջն ունեցե՛ք հիասքանչ նմուշներ, լուսավոր գույներ: Ձեր կյանքից հեռացրե՛ք խեղճության բոլոր արտահայտությունները: Եվ դիտե՛ք ինքներդ ձեզ. Ձեր վիճակը չի՞ թեթևացել արդյոք:

Ուկնդրե՛ք ականջ շոյող մեղմ ու ներդաշնակ երաժշտություն կամ խաղաղ ու

մեղեդային մանտրաներ: Ձեր շրջապատը լցրե՛ք դրական էներգիաներով:

Դուք պետք է ձեր կյանքում մշտապես վերահսկողության տակ պահեք միայն երկու բան՝ ձեր ներքին վիճակը ու ձեր արտաքին միջավայրը: Ձեր գիտակցությունից հեռացրե՛ք բացասական մտքերն ու զգացումները, դե՞ն նետեք ձեր շրջապատից սխալ, ոչ աստվածային նմուշները:

Միայն այս երկու բանն են, որ կարող են ձեզ վերադարձնել կյանքի ուրախությունը, ձեր էությունը լցնել ներդաշնակությամբ և սիրով»: (Մեծն Աստվածային Ուղղորդիչ, 25 հունիսի, 2013 թ.)

Այս ամենը մեր ուժերի սահմաններում է: Միայն հարկավոր է բարի սովորույթ դարձնել գեղեցիկի վրա կենտրոնանալը, ամեն ինչում լավ կողմը տեսնելը: Լավատեսորեն նայել աշխարհին:

Սկսում ենք վարժանքները

Եվ այսպես, մենք սկսել ենք մեր կյանքում ազատվել «աղբից»: Ավելի քիչ ենք դիտում բացասական նորություններ, ավելի ու ավելի ենք քչացնում դատարկ խոսակցությունները, ավելի քիչ ենք այցելում սոցցանցեր: Եվ իսկապես էլ ավելի թեթև ենք զգում մեզ: Եվ

որքա՛ն ժամանակ տնտեսեցինք։ Հիմա հարկավոր է այդ ազատված տարածքը լցնել ինչ- որ լավ բանով։

Մենք հենց հիմա կարող ենք կիրառել մեր նոր գիտելիքն այն մասին, թե՝ մեր իշխանության տակ է **այնպիսի ապագա կերտելը, ինչպիսին մենք ուզենք**: Սկսենք վարժանքները:

Ահա և Վեհապետների հուշումը մեզ:

«...այն, ինչ մոտակա ժամանակներում ձեզ անհրաժեշտ է սովորել, ձեզ շրջապատող իրականության նկատմամբ դրական տրամադրվածություն մշակելն է: Դուք պետք է դրական պատկերի աճ խթանեք ձեր գիտակցության մեջ՝ ձեր երկրի, ձեր բնակավայրի, վերջապես ձեր ընտանիքի ապագայի համար:

Սովորությո՛ւն դարձրեք ամեն անգամ ձեր ծառայության ավարտից հետո ներխոկում անել՝ ի բարօրություն Ռուսաստանի – Հայաստանի: Միացրե՛ք ռուս երգահանների՝ Ռախմանինովի, Չայկովսկու երաժշտությունը կամ հանրահայտ համաշխարհային երգահանների՝ Բախի, Մոցարտի, Բեթհովենի երաժշտությունը:

Խորհեցե՛ք այն մասին, թե ինչպիսին կուզեիք տեսնել ձեր երկրի ապագան: Մի՛ խուսափեք առաջին հայացքից ֆանտաստիկ թվացող գաղափարներից: Ձեր

գիտակցության մեջ ձեր երկրի համար երջանիկ ապագա՛ կառուցեք:

Եթե ձեզ համար դժվար է երկրի վրա կենտրոնանալը, ապա կարող եք մտորել այն գործունեության մասին, որ կարող է վարել ձեր խումբը:



Եվ եթե դուք ոչ մի խմբի էլ չեք պատկանում, ապա կարող եք ձեր գիտակցության մեջ կառուցել ձեր ընտանիքի, ձեր հարազատների, մտերիմների և վերջապես, հենց ձեր ապագան:

Եթե ձեր երևակայությունը չի բավականացնում, որ երջանիկ ապագա պատկերացնեք ձեր երկրի, ձեր ընտանիքի համար, ապա մտածե՛ք այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում երջանկությունը ձեզ համար: Ի՞նչ կուզեիք փոխել ձեր կյանքում, որ մշտապես երջանկության, անդորրի, ներդաշնակության, սիրո զգացում ունենաք:

Նույնիսկ գիտակցության վերամբարձ վիճակում գտնվելիս, եւ ձեզանից ծանր մտքերն ու զգացումները վանելուց հետո, դուք ձեր աշխարհի համար դառնում եք լույսի աղբյուր»: (Վեհապետ Լանելլո, 29 մայիսի, 2005 թ.)

Քանի որ մենք ձեզ հետ արդեն միացել ենք դրական մտածողության համաշխարհային ցանցին, մենք այդ լավագույն ապագայի պատկերի ստեղծման կարևոր գործընթացին կարող ենք օրական 10-15 րոպե նվիրել: Սա նման է առավոտյան վարժությունների, բայց ոչ թե մարմնի, այլ մտքի ու հոգու համար:

Որքան շատ լինենք, այդքան արդյունքը մեծ կլինի: Եվ երբ հավաքված կլինի այն մարդկանց կրիտիկական զանգվածը, որ վստահ են մոլորակի վրա կատարվելիք իրադարձությունների բարենպաստ զարգացմանը, այնժամ մեր ուշադրության էներգիան դեպի իրեն կձգի լուսավոր ապագան:

Սկսենք մեզնից, և աշխարհը կփոխվի:

Հառաջ դեպի երգանք

Եկե՛ք կտրվենք առօրյա հոգսերից: Միացնենք հեռախոսը, գեղեցիկ երաժշտություն միացնենք, հարմար դիրք ընդունենք, փակենք աչքերը և պատկերացնենք ցանկալի ապագան:

Ներքին հայեցողության առաջ կբացվի բարձրարվեստ շինություններով թռչող սարքերով, խնամված պարտեզներով ու զբոսայգիներով մի պատկեր: Ավելացնենք երեխաների հետ զբոսնող մարդկանց: Բոլորը բարյացակամ ժպտում են, հագել են հարմար բաց գույնի հագուստներ: Ամենուրեք թագավորում է մաքրությունը, կարգուկանոնը, խաղաղությունը, անդորրը…

Գուցեև տեսնենք մաքուր ծովեր ու օվկիանոսներ: Եվ սպիտակ առագաստանավը

քամով լեցուն առագաստով, որ կարող է լողալ թե՛ ջրի վրա, թե՛ օդում: Ահա գիտնականների մի խումբ, որ իենց աշակերտ-դպրոցականների հետ ուսումնասիրում են ստորջրյա աշխարհը: Երեխաները հաղորդակցվում են դելֆինների հետ՝ ավելի ու ավելի լավ հասկանալով նրանց լեզուն:

Ահա և ապագայի դպրոցը, որտեղ աշակերտական սովորական նստարաններ չկան: Այստեղ լուսավոր ընդարձակ դասարաններ են՝ կլոր սեղաններով և հոլոգրաֆիկ գրատախտակներով, բազում լաբորատորիաներ: Ուսուցիչները նշանավոր մարդիկ են՝ փիլիսոփաներ, գրողներ, նկարիչներ, գիտնականներ: Յուրաքանչյուր աշակերտ ունի իր դաստիարակը, որ անհատական ծրագիր է կազմում իր խնամարկուի համար՝ կախված նրա ձգտումներից և տաղանդից: Ծրագրում շատ են գործնական պարապմունքները:

Ահա այս հինգերորդդասարանցի աղջիկը սիրում է բուսաբանությունը և ուսուցչի հետ

զբաղվում է բույսերի սելեկցիայով: Իսկ այս տասներորդդասարանցին մասնակցում է վնասված հյուսվածքը վերականգնող բժշկական սարքի գործարկմանը:

Ի՜նչ հրաշալի երազանքներ…

«…Մի՛ արգելակեք ձեր գիտակցությանը, թույլ տվեք ձեզ ամենաբարձր ֆանտազիաներ ունենալ, և դրանք անպայման իրականություն կդառնան:

Երեխա՛ մնացեք, երազե՛ք և երևակայացե՛ք և թույլ մի՛ տվեք ձեզ նմանվել այն մեծահասակներին, որ ապրում են մոլորակի վրա» (Սիրեցյալ Ալֆա, 16 ապրիլի 2006 թ.):

«Ամենաբարձր ֆանտազիաներ…» Շարունակենք երազել: Իսկ ի՞նչ կլինի, եթե մենք ընդգրկենք պետության կյանքի բոլոր

ոլորտները: Ո՞րն է լինելու ապագայի մարդկանց համար ամենագլխավորը:

Բարձրագույն արժեքը կլինի խելամիտ Օրենքին հետևելը, որ ընկած է ամբողջ Տիզերքի հիմքում: Այն կարելի է անվանել Բարձրագույն Օրենք, Բնության Օրենք, Աստվածային Օրենք, Բարձրագույն Բանականության Օրենք…

Կրոնական դոգմաները կգնան անէություն: Ճշմարիտ Հավատը կբնավորվի մարդկանց սրտերում: Ճշմարիտ հավատը հիմնված կլինի Աստծո, մերձավորի, բնության, մոլորակի, կենդանություն ունեցող ամեն ինչի նկատմամբ:

Ի՞նչ հատկանիշներով է օժտված լինելու ապագայի մարդը:

Նոր մարդուն բնորոշ են բռնության բացառումը, գթասրտությունը, կարեկցանքը, հանդուրժողականությունը այլ կրոնների հանդեպ, արժանապատվությունը, պատիվը, փառքը: доблесть. Այդպիսի մարդը պատրաստ է ցանկացած պահի օգնության հասնելու մարդկանց ու երկրին:

Որակների այս ցանկը կարելի է լրացնել: Պատկերացնենք, որ այս կարգի մարդկանց թիվը ավելի ու ավելի է մեծանում:

Պետական կառուցվածքի մասին ի՞նչ կարող ենք երազել:

Իշխանությունը լինելու է պատվավոր

պարտականություն: Կառավարողներ և պաշտոնյաներ կդառնան այն մարդիկ, որ ամենաբարձր մարդկային առաքինություններով են օժտված: Նրանց նշանաբանն է՝ միասնականությունը և մարդկանց ծառայելը:

Լավ կլիներ, եթե հատուկ կրթական հաստատություններ ստեղծվեին այսպիսի առաջավոր ղեկավարներ պատրաստելու համար: Այնտեղ կդասավանդեն և կսովորեն հասարակության առավել բարոյական և գիտակից անդամներ:

Աշխարհում պատերազմներ չեն լինի: Սկզբում զինված ուժերը գօգտագործվեն բացառապես պետական սահմանները պահպանելու համար: Այնուհետև ցանկացած միջազգային հարաբերություններում կիրականացվի **առանց բռնության** սկզբունքը: Կվերանա բանակների անհրաժեշտությունը: Սպառազինությունների մրցավազքը կանգ կառնի, ռազմական պաշարները՝ ոչնչացված, տեխնիկան վերափոխված է խաղաղ կարիքների համար:

Աշխատանքի հանդեպ բոլորովին այլ մոտեցում կծնվի: Աշխատանքը կդառնա մարդու ստեղծագործական ինքնադրևորման միջոց: Աշխատանքը ուրախություն կլինի: Աշխատանքը հասարակության բոլոր անդամներին բարիք կբերի:

Կրթությունը կդառնա անձի ներքին հնարավորությունների բացահայտման միջոց:

Յուրաքանչյուր մարդ կստանա հնարավորինս բազմատեսակ ընդհանուր մարդասիրական կրթություն: Եվ, իհարկե, այն պետք է անվճար լինի: Նոր մոտեցումները հետաքրքրություն կառաջացնեն ուսման նկատմամբ: Ամեն մի երեխա պատկերացում կունենա Տիեզերքի Բարձրագույն Օրենքի մասին: Յուրաքանչյուր մարդու կատարելագործումը Աստվածային ինքնադրսևորման համար բոլոր ծրագրերի նպատակն է: Հատուկ ուշադրություն է դարձվում բարոյականությանը: Այն մարդուն, որ պահպանում է համահնչունությունը Բարձրագույն Օրենքի հետ. պետք չէ մարդկային օրենքների ավելի մեծ քանակություն:

Քաղաքացիական մի շարք **օրենքներ** կկորցնեն իրենց իմաստը: Սրանով հանդերձ գործնականում չկան հանցագործություններ: Բանտերը օրեցօր դատարկ են մնում: Վիթխարի միջոցներ են խնայվում, որ ուղղվում են կրթությանն ու դաստիարակությանը: Ճիշտ կրթության շնորհիվ կվերանա սոցիալական և ունեցվածքի անհավասարությունը:

Բժշկությունը շահույթի միջոց չի լինի և անվճար կլինի**:** Բժշկի նպատակը կլինի յուրաքանչյուր մարդու առողջությունը: Առողջ ապրելակերպը, սննդի էկոլոգիապես մաքուր մթերքները, բնության մեջ լինելը, այս ամենը կյանքի անբաժանելի մասն են:

Բոլոր **գիտական** նորույթները ուղղված կլինեն կյանքի բարելավմանն ու առողջության պահպանմանը: **Արվեստի** բոլոր տեսակները մարդուն ավելի լավը դարձնելու համար են: **Զանգվածային լրատվամիջոցները** կզբաղվեն լուսավորչությամբ:

Ընտանիքը կդիտարկվի որպես տղամարդու և կնոջ միություն՝ երեխաներ

ծնելու և դաստիարակելու համար, ինչպես նաև հասարակությանը նեցուկ լինելու համար: Յուրաքանչյուր երրորդ ընտանիք ունենալու է հինգ և ավելի երեխա: Ամեն մի երիտասարդ ընտանիքի համար կառուցվելու է բարեկեցիկ տուն՝ էկոլոգիապես մաքուր նոր տիպի ավաններում՝ պետության հաշվին:

Հատուկ խնամք՝ **տարեցներին:** Նրանք պետական բանկում կունենան անլիմիտ հաշիվ: Եվ նրանք կկարողանան անսահմանափակ ձևով օգտվել դրամական միջոցներից՝ իրենց սննդի, բնակության, բուժման, ինչպես նաև հոգևոր կարիքների համար: Օրինակ՝ ուխտագնացություններ դեպի աշխարհի տարբեր սրբավայրեր:

Բոլոր երկրները հարուստ են: Այն երկրները, որ դժվարության մեջ են, անմիջապես ուրիշ պետությունների աջակցությունն են ստանում: **Սահմանները պայմանական են** և գոյություն ունեն միայն նրա համար, որ կառավարողը իր բոլոր ուժերը կարողանա ուղղել այն տարածքի բարելավմանը, որի համար ինքը պատասխանատու է:

Մեր մոլորակի համար Ոսկե Դար է սկսվել: Եվ այս ապագան մենք ենք ստեղծել՝ սկզբում երազանքների մեջ, քանի որ ամեն ինչ սկսվում

է մտքից, որի թռիչքը բարձր է ու անսահման:

Իսկ այնուհետև մենք աստիճանաբար մոտեցնում ենք մեր լուսավոր ապագան կոնկրետ գործերով: Եվ Ոսկե Դարը իրականություն կդառնա:

Հառա՛ջ դեպի երազանք:



Նոր մտածողությունը դառնում է գործողություն

Մեր նավը՝ «Երկիր Մոլորակը», սկսել է շարժումը *դեպի Նոր Դարաշրջան* երթուղիով: Այն դանդաղորեն բայց հաստատուն կերպով արագություն է հավաքում: Մենք ձգտում ենք հրաշալի ապագային և գիտենք, թե ինչպես պետք է այն ստեղծել: Մենք ենք մեր կյանքի նավապետները: Յուրաքանչյուր օր մենք կարող ենք մեր լուսավոր ապագայի երազանքները լրացնել նոր մանրամասներով: Եվ ավելի ու ավելի մեծ թիվ կազմող համախոհների կողմից ստեղծված պատկերը օր օրի կընդլայնվի և կամրանա՝ մինչև նստվածք տա ֆիզիկական ոլորտի վրա:

Սակայն միայն երազելը քիչ է:

Որպեսզի երազանքը իրականանա,

կոնկրետ քայլեր պետք է կատարել՝ հատկապես ֆիզիկական ոլորտում:

Ինչպե՞ս գործել

Վեհապետի շատ ուղերձներում խոսվում է այն մասին, որ եկել է իրական գործողությունների ժամանակը: Ինչո՞վ պետք է զբաղվենք, ո՞ւր փախչենք:

Դիմենք Վեհապետ Մորիային, որ միշտ մեզ գործողությունների է կոչում.

«Ես ձեզ խնդրում եմ, սկսե՛ք գործել: Ոչ միայն կարդալ թելադրանքներ, աղոթքներ Վարդարաններ, պատգամներ, այլև իրական գործողություններ ձեռնարկել ֆիզիկական ոլորտում: Հնարավոր է՝ այնքան էլ հստակ չեք հասկանում, թե ի՞նչ տեսակ գործողությունների մասին եմ խոսում: Ես ձեզ չեմ խնդրում, որ դուք տապալեք այն երկրի կարգը, որում ապրում եք, չեմ խնդրում, որ հանրահավաք կամ հեղափոխություն անեք: Ես ձեզ խնդրում եմ, որ անեք ձեր սովորական մարդկային գործերը, որոնք մեծավ մասամբ հենց անում էլ եք: Բայց ես խնդրում եմ, որ այդ գործերն անեք գիտակից ձևով, ձեր արած յուրաքանչյուր գործը դիտարկելով բարոյական օրենքի, համայն տիեզերքում

գործող Աստծո Օրենքի պրիզմայով: Ես խնդրում եմ, որ ամեն օր մտորեք ձեր գործողությունների հետևանքների մասին և կշռադատեք ձեր ամեն մի քայլը:

Մտորե՛ք, թե որքա՞ն ավելի դյուրին կարող էիք դարձնել ձեր գոյատևումը մատերիայի մեջ, եթե ձեր ամեն մի քայլը լիովին համապատասխանեցնեիք համայն Տիեզերքում գործող Աստծո Օրենքի հետ:

Դուք նոր կարմա չէիք ստեղծի և արագացված տեմպերով կկարողանայիք բեռնաթափել ձեր անցյալի կարման՝ կատարելով ճիշտ նախընտրանքներ:

Որքա՞ն պարզ է սա, հանճարեղորեն պարզ... Մենք գալիս և միշտ նույն բանն ենք ասում: Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ չեք լսում մեզ...» (Սիրեցյալ Էլ Մորիա, 23 դեկտեմբերի, 2007 թ.).

Պարզվում է՝ ոչ մի տեղ պետք չէ փախչել: **Ընդամենը պետք է ճիշտ ընտրություններ կատարել, ամենօրյա հսկողության տակ պահել ձեր գործողությունները, զգացումներն ու մտքերը:**

Ա՛խ, հենց սա էլ ամենադժվարն է: Մենք ծույլ ենք ու մոռացկոտ: Այսօր մենք ոգևորված ենք Վեհապետի Ուղերձով, խոստանում ենք, իսկ վաղը արդեն անցել ենք հաճույքների վայելմանը:

Սակայն, առանց մեզ ոչինչ չի ստացվի: Միայն մեր գիտակցության օգնությամբ կարող են դրական փոփոխություններ առաջանալ ոչ թե պարզապես մեր անձնական կյանքում, այլ նաև մեր նավի՝ «Երկիր մոլորակի».

«Բանալին, որ այսօր տալու եմ ձեզ, մակերեսին է գտնվում: Ձեր ամենօրյա նախընտրանք և արարք, որ կատարում եք օրվա ընթացքում,

, եթե դրանք Աստվածային բնույթ ունեն, իրականացնում են հենց այն աշխատանքը, որի կատարմանը դուք կոչված եք: Եթե դուք առաջվա պես գերադասում եք կենտրոնանալ պատրանքների, զվարճանքների, ձեր էգոյի քմահաճույքների վրա՝ ինչպես էլ որ դրանք արտահայտվելու լինեն, դուք դառնում եք Աստծո և Նրա ծրագրերի ընդդիմադիրը:

Նշանակություն ունի ձեր յուրաքանչյուր միտքը:

Նշանակություն ունի ձեր յուրաքանչյուր հույզը:

Նշանակություն ունի ձեր յուրաքանչյուր գործողությունը:

Այժմ սկսվում է ձեր աշխատանքը Աստծո համար» (Տեր Շիվա, 22 հունիսի, 2012 թ.).

«Յուրաքանչյուր» բանալի բառը նշանակում է մեր բոլոր արարմունքները՝ նույնիսկ ամենասովորականները: Մեր բոլոր պատասխանները տարբեր իրադարձություններին, մեր յուրաքանչյուր բառ և անգամ միտք, պահվում և հաշվի են առնվում մի «զանձանակում»: Բոլոր բարին ու դրականը միանալով ձեր «զանձանակում» մոտեցնում են լավ ժամանակները: Ամբողջ բացասականը, նույնպես կուտակվելով ձեր

«գանձանակում», խանգարում է դրան: Ակամայից մտածում ես պատասխանատվության մասին:

Ի՞նչ անել, եթե մեր ներքին փոփոխությունները բախվում են արտաքին դիմադրության

Սկսելով ավելի գիտակցաբար մոտենալ մեր յուրաքանչյուր մտքին, զգացմանն ու գործողությանը՝ մենք նկատում ենք մեր կյանքում կատարված փոփոխությունները: Սկզբում դրանք կարող են տխուր, նույնիսկ ողբերգական թվալ: Մեզ չեն հասկանում մերձավորները, ընկերները, գործընկերները և սկսում են հակադրվել մեր փոփոխություններին: Մեզ հալածող տհաճ երևույթները կարծես հորդում են առատության եղջյուրից: Ի՞նչ անել: Սովորե՛լ հաղթահարել բացասական վիճակները և փոխել վերաբերմունքը իրադրություններին, - մեզ հուշում է մեր լավատես օգնական Սեն Ժերմենը:

«…**դուք ունակ եք ձեր գիտակցության մեջ վերափոխելու իրավիճակը:** Իհարկե դուք ձեզանից դուրս ոչինչ չեք փոխում, բայց դուք վերափոխում եք ձեր վերաբերմունքը իրավիճակին: Դուք պարզապես այդ իրադրության մեջ գտնում եք մի դրական պահ, հետո՝ էլի մեկը: Հետո զբաղվում եք ձեզ հաճելի մի գործով և հետո, երբ վերադառնում եք նույն իրավիճակին, այն արդեն այնքան վատ ու անհուսալի չի թվում: **Եվ իրավիճակն ինքն էլ է փոխվել, քանի որ ձեր ճիշտ վերաբերմունքով փոխել եք այն:**

<…>

Կարողացե՛ք ցանկացած իրավիճակի նայել դրական կողմից: Կարևորը ճիշտ դիտանկյուն ընտրելն է»: (10 դեկտեմբերի, 2009 թ.).

Եվ այն պահերին, երբ անչափ դժվար է ամեն ինչ, պետք է մի շատ հասարակ բան անել,-ասում է Վեհապոտ Սեն Ժերմենը:

«Պարզապես, այն պահին, երբ ամեն ինչ անհույս է թվում և անիմաստ, **հիշել իմ մասին:** Պարզապես պատկերացրե՛ք իմ կերպարը, ձեզ հնարավորությո՛ւն տվեք շեղվելու ընթացիկ իրավիճակից:

...Սա այն է, ինչ դուք պետք է սովորեք» (10 դեկտեմբերի, 2009 թ.).

Կարելի է ձեռքն առնել Սեն Ժերմենի պատկերը կամ էլ պարզապես մտովի պատկերացնել նրա կերպարը և ասել.«Թանկագին Սեն Ժերմե՛ն, օգնի՛ր ինձ», և օգնությունը կհասնի:

Մեզ համար կհեշտանա համբերելը և տնտեսական փոփոխությունների այս շրջանն ապրելը: Պարզապես աշխարհին ժամանակ է պետք, որ հարմարվի մեզ:

Առաջին հաղթանակներ

Հավատարիմ մնալով նախընտրած ուղղությանը՝ որոշ ժամանակ անց մենք կհայտնաբերենք, որ մերձավորները ավելի մեծ ըմբռնողություն են ցուցաբերում, և եթե դեռ չեն միացել մեզ, գոնե չեն խանգարում մեզ նոր ձևով ապրելու: Փոխվել է նաև ընկերների շրջանակը՝ դեպի մեզ են ձգվել այն մարդիկ, որ ցանկանում են ավելի գիտակցական կյանքով ապրել: Կյանքի նոր կերպը ուրախությո՛ւն է բերում:

Վեհապետ Լանելլոն բացատրում է կատարվածը և շնորհավորում է մեզ հաղթանակի առթիվ:

«...թույլ տվե՛ք ձեզ շնորհավորել Հաղթանակի առթիվ: <...>

Գիտակցության նոր աստիճանի հասած մարդիկ, շնորհիվ այս մակարդակում ձեռք բերած հատկությունների, առավել հաջողակ են լինելու իրենց բոլոր գործերում և նախաձեռնություններում: Սա նրանից է, որ այն, ինչ ներքուստ խանգարում էր հաջող աշխատանք կատարելուն, այժմ գոյություն չունի կամ էլ ավելի քիչ խոչընդոտներ է հարուցում իրենց կյանքի և գործունեության համար: Ձեր գոռոզմտությունը և ձեր թերությունները այլևս չեն կարողանալու որևէ ազդեցություն ունենալ ձեր գործի և այն ամենի վրա, ինչ անում եք: **Որովհետեւ դուք կարողացել եք ձեր մեջ վեր կանգնել այդ ամենից:** Դուք դա կզգաք ձեր կոլեկտիվներում մթնոլորտի փոփոխությունից: Դուք կզգաք, որ կան մարդիկ և ամբողջ կոլեկտիվներ, որոնց հետ դուք ձեզ հանգիստ ու թեթև եք զգում:

...Դուք գիտեք, որ նմանը ձգտում է նմանին:

Ու նա, ով անկարող է դիմանալ ձեր թրթիռներին, աստիճանաբար կհեռանա ձեզնից»: (Սիրեցյալ Լանելլո, 11 հունիսի, 2005 թ.)

Կյանքը կարգավորվում է: Մեր առջև նոր հեռանկարներ են բացվում: Ուրախանա՛նք այս առիթով:

Հին Աշխարհի Վերջը նախասահմանված է

Մեր «Երկիր Մոլորակ» նավը շարունակում է իր շարժումը Նոր Դարաշրջանի երթուղով: Սակայն այն տարօրինակ ձևով է շարժվում, ինչ-որ քաշքշուկներով՝ կարծես ինչ-որ բան կասեցնում է նրան:

Նայենք նավից այն կողմ: Այո՛, դա Հին Աշխարհն է, որ ամուր կառչել է նավից և չի ուզում նրան բաց թողնել կարծրացած նախապաշարումների նավահանգստից:

Այսպես է իրեն պահում մահացու վիրավոր գազանը, երբ զգում է իր վերահաս վերջը և իր թուլության կատաղությունից՝ հուսահատ դիմադրում է:

Իզուր է նա դիմադրում, հնարավոր չէ կանգնեցնել էվոլյուցիոն ծրագիրը. Հին Աշխարհի վերջը նախասահմանված է: Եվ հիմա մեզ պարզ է դարձել գազանի իրական դեմքը, դիմակները պատռված են, հին ուժերը բացահայտ են գործում՝ իրենց անբարո գործողություններն այլևս չքողարկվելով վերամբարձ գաղափարախոսություններով:

Որքան էլ անցանկալի լինեն ուշացումները, հարկավոր է արգելակել ընթացքը և հասկանալ, թե այնուամենայնիվ իրենից ի՞նչ է ներկայացնում Հին Աշխարհը, որում մենք կարծե թե հարմարավետ ապրում էինք: Եվ այն համեմատել նրա հետ, ինչ մեզ սպասում է Նոր Աշխարհում: Ու վերջնական ընտրություն կատարել, եթե դեռ ինչ-որ մեկը կասկածում է:

Եվ նորից մեր ուղեկցորդ Սեն ժերմենը հուսադրում է մեզ:

«Դուք պետք է փոխեք ձեր գիտակցությունը, փոխեք ձեր մոտեցումներն այն ամենի նկատմամբ, ինչ շրջապատում է ձեզ: Որովհետև Նոր Դարաշրջանը հիմնված է լինելու բոլորովին նոր սկզբունքների վրա: Եվ

եթե դուք կառչում եք վախից, եսամոլությունից, սահմանափակումներից, կմնաք ետևում, դուք կուշանաք էվոլյուցիայի գնացքից:

Որովհետև Նոր դարաշրջանին բնորոշ կլինի համագործակցությունը, ազատությունը և այն հարաբերությունները, որ հիմնված են բարեկամության ու սիրո վրա:

Փոխել գիտակցությունը եւ մտածողությունը. ահա թե առաջին հերթին ի՞նչ է պետք անել:» (Սեն Ժերմեն, 26 հունիսի, 2012 թ.).

Միացնում ենք բանականությունը և սկսում ենք համեմատել:

Հին և նոր մտածողություն

Հին Աշխարհի մտածողությունը հիմնված է մարդկային օրենքների վրա: Այդ օրենքները վիթխարի թիվ են կազմում, և դրանք անընդհատ փոխվում են: Հասարակության մեջ բարոյականության սահմանագիծը մշտապես իջնում է, և օրենքները ավելի ու ավելի անբարո են դառնում, ավելի ու ավելի աբսուրդային. հարմարվում են մեր իրականությանը: Մարդկային օրինաստեղծությունն այժմ հիշեցնում է մի այլանդակ հրեշի՝ հազարաձեռ ու բազմագլուխ:

Աստվածային Օրենքը, որի մասին խոսում են Իմաստության Վեհապետները, չի փոխվում, այն արդեն միլինավոր տարեկան է: Նրա դրույթները այնքան էլ շատ չեն:

Աստվածային Օրենքն ասում է, որ մարդը՝ բացի ֆիզիկական մարմնից ունի նաև բարձրագույն անմահ մաս, որ Երկրի վրա մեր այժմ ապրած կյանքը ոչ առաջինն է, ոչ էլ վերջինը, և որ մեր անմահ մասը մարմնավորվում է շատ անգամներ, ըստ վերամարմնավորման Օրենքի:

Եվ այն իրադարձությունները, որ այսօր

տեղի են ունենում մեզ հետ և տեղի են ունենալու նաև ապագայում, կախված են այն բանից, թե մենք ի՞նչ ենք արել նախկինում, ներկայիս կյանքում և նախկին մարմնավորումների ժամանակ: Ինչ ցանել ես, այն էլ կհնձես: Այս է կարմայի օրենքը կամ պատճառի և հետևանքի Օրենքը:

Աստվածային Օրենքի երեք կետ ձկներն են՝ Բարձրագույն Բարոյականության Օրենքը, կարմայի Օրենքը և վերամարմնավորման Օրենքը: Մնացյալը Աստվածային Ուսմունքի այս երեք դրույթների հետևանքներն են ներկայացնում:

Ժամանակակից հասարակության մեջ բոլոր ձգտումները և ձեռքբերումները կենտրոնացած են նյութական բավարարվածության շուրջ: Նրանում գերակշռում է **սպառման գաղափարը:**

Նոր Աշխարհում ամեն ինչ ենթարկվում է Աստվածային Օրենքին: Կենտրոնացումը Բարձրագույնի վրա՝ մարդուն թույլ է տալիս ներդաշնակ զարգանալ, թե՛ հոգևոր, թե՛ բարոյական առումով: Պահանջները դառնում են բնական, որովհետև հեռացել են վախը և շահի ծարավը:

Հին մտածողությունը ամեն ինչում թշնամի է տեսնում: Ով ասես կարող է թշնամիդ լինել՝ հարևանը, բնակվարչության ծառայությունը, կառավարությունը, արտասահմանյան պետությունները: Իսկ եթե կա թշնամի, նրա դեմ պետք է պայքարել:

Պայքարը չարություն, ագրեսիա, ատելություն է ծնում:

Նոր մտածողության մեջ գերակշռողը կլինի բռնության բացակայությունը: Պետք չէ պայքարել: Պետք է նայել շուրջը ու տեսնել, թե որքան շատ են մեր օգնության կարիքն ունեցող մարդիկ:

Սերը, գթասրտությունը, կարեկցանքը, հենց այս երեք հատկություններն են դառնալու մարդու գիտակցության բարձր մակարդակի հիմքերը: Բարձրագույն դրսևորումը կլինի **մարդկանց ծառայելը,** ոչ թե քեզ, այլ ուրիշների համար ապրելը:

Կարող ենք էլի համամատություններ անցկացնել:
Եկեք հասկանանաք, էլ ինչո՞վ է Հին Աշխարհը վնասել զարգացման էվոլյուցիոն ծրագրին:

«Այծիկների»ստեղծումը

Գուան Ինը՝ Բարեգթության և

Կարեկցանքի Աստվածուհին, խոսում է այն մասին, որ հին մտածողության անկատարությունն ու եսասիրականությունը արտահայտվում են կյանքի բացարձակապես բոլոր բնագավառներում:

«Մարդու գործունեության բոլոր ոլորտներում երևում են զարգացման Աստվածային ուղղուց հեռացումներ:

Կրթական համակարգը ոչ այնքան կրթություն է տալիս, որքան ապագա սերնդին զրկում է սովորելու և Աստծո մեջ կատարելագործվելու ցանկությունից:

Առողջապահության համակարգը մարդուց խլում է ամբողջ առողջությունը:

Ֆինանսական համակարգը կապված է ոչ թե ստեղծագործ աշխատանքային գործունեության, այլ այն մարդկանց մենթալ և զգացմունքային անկումների հետ, որոնք խաղում են աճուրդներում և կառավարում են կապիտալները:

Քաղաքական համակարգը լիովին կտրված է մարդկանց կարիքներից, թույլերին և անիրավվածներին ծառայելը փոխարինված է առանձին մարդկանց անձնական շահերին ծառայելով:

Զանգվածային լրատվության միջոցները տարածում են ինչ ասես, բացի տեղեկատվությունից (ասեկոսեներ, բամբասանք, սկանդալներ, քրեական պատմություններ).

Մարդկանց գործունեության բոլոր ոլորտները պետք վերակառուցվեն ըստ

Աստվածային Օրենքի, այլապես դրանք պարզապես չեն կարող գոյություն ունենալ: Մարդկությունը հասել է այն սահմանագծին, որից այն կողմ երեւում է չգոյությունը»(Գուան Ին, 24 հունիսի 2011թ.).

Ինչո՞ւ է այնպես ստացվում, որ հասարակության բոլոր ոլորտներում դիտվում անկում է դիտվում:

Մեր իմաստավորումը պետք է սկսվի այն հարցից, թե ո՞վ է ընթացիկ սցենարի ռեժիսորը: Համենայն դեպս դրանք նախագահներ չեն, քաղաքագետներ չեն և մասնագետներ չեն, այլ այն ուժերն են, որոնց ձեռքում կենտրոնացած են հիմնական դրամական միջոցները, և ովքեր եկամուտների հոսքերը վերաբաշխում են բացառապես իրենց օգտին: Հենց նրանցն է իրական իշխանությունը:

Այդ ուժերի առաջավոր ջոկատը զանգվածային լրատվամիջոցներն են, որոնք հմտորեն կառավարում են զանգվածների գիտակցությունը, վախ և խուճապ են տարածում: ԶԼՄ-ները եկրների միջև հիստերիա են բորբոքում, զգացմունքային տեռորի են ենթարկում մոլորակի բնակչությանը կորոնավիրուսի և այլ «սարսափների» մասին:

Գեղարվեստական ֆիլմերը լեփ - լեցուն են

բռնությամբ, դրանց հերոսները՝ իբր բարու սկզբունքները պաշտպանելու համար, ձախ ու աջ սպանում են բոլորին: Նույնիսկ մուլտֆիլմերում երեխաների հոգեբանական շեղումներ են պրոպագանդվում:

Հզոր տեղեկատվական (իրականում ապատեղեկատվական) ճնշման տակ մարդիկ ետ են վարժվում մտածելուց, ընկճախտներ, նեվրոզներ են ստանում և խուճապի մեջ վազում են հեռուստացույց, հնդկաձավար և զուգարանի թուղթ գնելու:

Ինչպե՞ս չհիշել քույրիկ Ալյոնուշկայի և եղբայր Իվանուշկայի հեքիաթը. «Մի՛ խմիր կճղակի փոսիկից, այծիկ կդառնաս», բայց եղբայրիկը չի լսում և այծիկ է դառնում: Իսկ մեր բոլորիս տներում կա մեր «կճղակափոսիկը»՝ անընդհատ միացված հեռուստացույցը, նոթբուկը կամ սմարթֆոնը: «Այծիկների» արտադրությունը հզորանում է:

Անհաշվելի ուռճացած սպառողականությունը առաջացնում է մոլորակի կլիմայական փոփոխություններ և աղբաբլուրներ, որոնք արդեն չգիտենք՝ ուր կորցնել: Այս իրավիճակից միայն երկու ելք կա. -Կամ նվազեցնել սպառողների թիվը, ինչի մասին ուղղակիորեն հայտարարում է ֆինանսական վերնախավը, կամ նվազեցնել սպառման մակարդակը, փոխել մեր մտածողությունը և գիտակցաբար գործել բնության հետ ներդաշնակելով: Հենց սրա մասին են խոսում Վեհապետները:



Ներքինն է կառավարում արտաքինը

Աշխարհը կառավարվում է կամ Սիրով կամ վախով: Ինչ որ մեր մեջ է, դա էլ դրսում է:

Մենք՝ ինքներս ենք մեր ներկան ու ապագան արարողները:

«Արտաքինը հեզորեն կրկնում է ձեր ներքին վիճակը <...>

...միայն ձեր ներքին ձեռքբերումների աստիճանն է, որ ձեզ համար բաց է անում դեպի հեռավոր էվոլյուցիա տանող ճանապարհը:

Ձեր գիտակցության մեջ պետք է հաղթահարեք արտաքին պատրանքային ուժերի դիմադրությունը:

Երբ մարդիկ զարգացած չեն, նրանք դուրս են գալիս փողոցները, հեղափոխություններ են անում, իշխանությունն են տապալում:

Ես ձեզ սովորեցնում եմ արտաքինը փոխել ներքինը փոխելու ճանապարհով: Եվ դա այն ճանապարհն է, որով ձեզ տանում են Համբարձյալ Վեհապետները:

Ներքին փոթորիկների հանդարտեցումը բերում է արտաքին փոթորիկների

հանդարտեցմանը: **Ներքինն է կառավարում արտաքինը: Ոգու Ուժը կառավարում է աշխարհը:**

Այս է պատճառը, որ մեզ հակադիր ուժերը ամեն ինչ անում են, որ մեր Ոգին լռի: Ու ձեր ոգու դեմ այդ պատերազմը ոչ մի րոպե չի դադարում»: (Մովսես, 21 դեկտեմբերի, 2013 թ.).

Հին աշխարհում մնալով՝ մենք պարզապես կորցնում ենք մեր հոգին:

Այսպես՝ ո՞ր աշխարհն ենք ընտրում՝ հի՞նը , թե՞ նորը: Պատասխանն ակնհայտ է:

Հին Աշխարհի վերջը կանխորոշված է:

Իրական և կեղծ ազատություն

Մեր նավի տախտակամածից մի խոսակցություն.

– Ո՞ւմ է հաճելի բանտում նստելը:

– Տարօրինակ հարց: Իհարկե ոչ մեկին:

– Իսկ եթե բանտախցի պատերն ընդարձակվե՞ն: Լինի հեռուստացույց, առաջարկվի բազմազան ճաշացանկ, ցանկության դեպքում՝ զբոսանքներ:

– Թեև պայմանները լավացել են, բայց բանտը մնում է բանտ՝ մեր ազատությունը սահմանափակողը:

– Իսկ եթե պատերը վերացվե՞ն: Եվ հնարավորություն տրվի օգտվելու աշխարհի բոլոր բարիքների՞ց:

– Բայց դա բա՞նտ է: Չէ՞ որ հենց դա է

ազատությունը. Ընտրի՛ր ինչ ուզում ես:

– Ընտրելու և ուզածդ անելու ազատություն: Եթե դրանից ճիշտ չօգտվես, դա կհանգեցնի ստրկության: Ո՛չ միանգամից, իհարկե:

– Բայց չէ՞ որ հենց Տեր Աստված է մեզ օժտել ազատ կամքով, ու մենք լիակատար ազատություն ունենք ընտրելու՝ ո՛ւմ լսենք և ո՛ւմ ետևից գնանք:

– Տե՛ս որ միշտ չէ, որ այդպես է: Շատ հաճախ մենք ազատությունը շփոթում ենք ամենաթողության հետ. «Ինչ ուզեմ՝ կանեմ». Այդ պատճառով էլ շատ մարդիկ ցանկանում են զբաղվել ամենաանարգ գործերով և շատ են զարմանում, երբ հանդիպում են օրենքի շրջանակներին:

– Այո՛, միայն և միայն Աստված է հիմնել իր Օրենքները: Եվ այդ օրենքները ավելի գլխավոր են մարդկայինից: Սակայն Աստվածային Օրենքներն էլ ունեն իրենց շրջանակները:

– Այդ դեպքում, ո՞րն է տարբերությունը: Որ կողմը նայում ես՝ շրջանակներ են, սահմանափակումներ:

– Մարդու կողմից գրված օրենքների և Աստվածային Օրենքի տարբերությունը կատարելության աստիճանի և արդարացիության չափի մեջ է:

Իսկ ի՞նչ են ասում այս առիթով Իմաստության Վեհապետները՝ մեր դեպի Նոր Դարաշրջան ճամփորդության Օգնականները:

Տարբերությունն այն է, որ ենթարկվելով Բարձրագույն Օրենքին, մարդը այդ Օրենքի

շրջանակներում գործելու **անսահմանափակ** ազատություն է ստանում: Աստվածային Օրենքի շրջանակներն այնքան ընդարձակ են որ մեզ համար դրանք իսկապես անսահման են: Այժմ մեզ համար նույնիսկ դժվար է պատկերացնելը այն բոլոր առավելությունները, որ մենք կունենանք Աստվածային Օրենքին հետևելով:

Դա կլինի գիտակցության նոր ստեղծագործ աստիճան, որը մուտք ունի դեպի կյանքի ավելի բարձր էներգետիկ և տեղեկատվական մակարդակներ:

Բայց ինչպես հաստատում են Վեհապետները, այդպիսի անսահմանափակ ազատության հասնելու համար, մենք պետք է հրաժարվենք մեր սիրելի կախվածություններից և սովորություններից:

«...իրականում դուք ստրկական կախվածության մեջ եք ձեր աշխարհի իրերից: Դուք այնպիսի կախվածության մեջ եք, որ ըստ էության ձեր իրերի ստրուկն եք, և որպես հետևանք՝ **ստրկական կախման մեջ եք ձեր աշխարհի հանգամանքներից: Ու ձեր առաջ վաղ թե ուշ հարց կծառանա՝ ի՞նչպիսի ազատություն ընտրել:** Իրակա՞ն ազատություն, Աստվածային, որ ձեզ կազատագրի ձեր աշխարհի իրերից ստրկական կախումից, թե՞ դուք, ինչպես և նախկինում, գերադասում եք մնալ պատրանքային ազատության մեջ...» (Սիրեցյալ Սուրիա, 3 հունվարի 2006 թ.).

Պետք է խոստովանել, որ մենք իսկապես մեծապես կախված ենք բջջային հեռախոսներից, հեռուստացույցից, սոցանցերից, ռոք-երաժշտությունից, շոփինգներից և ներկայիս հասարակության այլ ատրիբուտներից:

Երբ մենք կապվում ենք նյութական առարկաներին, մենք փաստորեն դառնում ենք դրանց ստրուկը: Մենք մեզ զրկում ենք ազատությունից, որ բնորոշ է Նոր Դարաշրջանին՝ ստեղծագործական

ազատությունից, գիտակցության նորանոր բարձունքների հասնելուց:

Իսկ Հին Աշխարհն արդեն մեզ հրամցնում է գայթակղություն գայթակղության ետևից՝ սմարթֆոնների և ավտոմեքենաների նորանոր մոդելներ, զվարճալիքների ամբողջ արդյունաբերություն, միասեռ ամուսնություններ… Եվ ահա մենք կուլ ենք տվել խայծը: Եվ մեզ ավելի ու ավելի հրապուրում են դեպի ծուղակը:

Այս բոլոր «բարիքներից» օգտվելու համար հարկավոր է նախ վճարել՝ չիպ դնել և պատվաստումներ ստանալ: Վե՛րջ, արդեն ծուղակը չխկաց:

Մեր կյանքի ամբողջ ճանապարհը՝ ծնված օրից հսկվելու է մինչև վերջին մանրուքը՝մեր բոլոր տեղաշարժերը, գնումները, հետաքրքրությունները, խոսակցությունները, նամակագրությունը: Այսինքն՝ մեր մտքերն ու գործողությունները վերահսկվելու և հմտորեն ուղղորդվելու են: Աշխատատեղ ընտրելիս՝ կարող են փակել որոշակի ընկերություններում մեր գործելու կամ սեփական բիզնես հիմնելու հնարավորությունը: Կրթություն ընտրելիս՝ աղքատ ընտանիքների երեխաները կարող են միայն հեռավար էժան կրթություն ստանալ և միայն որոշակի համացանցային պաշարով:

Մեր փոխարեն որոշելու են՝ ինչ դառնանք, որտեղ ապրենք, ում սիրենք: Իսկ եթե հանկարծ

համակարգի կարծիքով խռովարար մտքեր արտահայտենք, կարգելափակեն մեր հաշիվները և քարտերը և նույնիսկ ապրելու հնարավորությունը:

Այսինքն, սկզբում մենք մեզ ծանրաբեռնում ենք նորանոր կապվածություններով և սովորություններով, իսկ այնուհետև մեզ առաջարկում են փաստորեն վաճառել մեր հոգին, որպեսզի կարողանանք օգտվել այն ամենից, ինչից մեզ կախման մեջ են դրել:

Եվ մենք կդառնանք ոչ այն, ինչ ուզում ենք, այլ այն, ինչ մեզ թույլ կտան դառնալ:

Մենք ոչ թե մարդիկ կլինենք, այլ բիոռոբոտներ: **Քանի որ մենք այլեւս ազատ կամք չենք ունենա: Մենք այն վաճառել ենք հանուն պարապ խաղալիքների: Եւ դա եղել է մեր սեփական ընտրությունը: Մենք ինքներս հրաժարվել ենք զարգացման էվոլյուցիոն ուղուց մեր հոգու համար:**

– Հիմա ի՞նչ անենք, հրաժարվե՞նք բջջային հեռախոսներից, համացանցից, ավտոմեքենաներից ու անտա՞ռ գնանք:

– Ինչո՞ւ միանգամից անտառ: Կօգտվենք քաղաքակրթության տեխնիկական նվաճումներից: Բայց՝ ողջամտորեն: Կուլ չտանք մեր վաստակածը, չվազենք գովազդային կանչերի ետևից, չտրվենք

СМИ պրոպագանդային: Սովորենք ճշմարտությունը տարբերել ստից: Սկսենք հրաժարվել վատ սովորություններից, հրաժարվենք կասկածելի բարիքներից: Չէ՞ որ եթե մենք **ազատ կամքով** հրաժարվում ենք պատրանքային աշխարի հետ կախվածություններից, մենք ձեռք ենք բերում անսահման ազատություն՝ Աստվածային Օրենքի շրջանակներում:

– Իսկ ի՞նչ կպատահի մարդկությանը, եթե այն խելքի չգա:

Երբ մենք չարաշահում ենք կամքի ազատությունը, որ Աստծո կողմից է տրված, խախտում ենք Աստվածային Օրենքը: Երբ մենք չափից ավելի ենք կապվում ֆիզիկական աշխարհին, մենք մեր հոգին զրկում ենք հետագա էվոլյուցիայից: Եթե մենք խելքի չգանք, մոլախոտի պես կհայտնվենք կոմպոստի մեջ:

«Դուք գտնվում եք բանտում, որ բաղկացած է ձեր գիտակցության սահմանափակումներից: Եվ ձեր բանտախցի պատերը միայն դուք կարող եք քանդել»(Տեր Մայտրեա, 29 ապրիլի 2006 թ.).

Ոչ ոք չի կարող խախտել մեր ազատ կամքը: Նույնիսկ՝ Իմաստության Տիրակալները:

Մենք միշտ ինքներս ենք կատարում մեր ընտրությունը: Իհարկե, այդ ընտրության վրա ինչ ասես կարող է ազդել: Այս է պատճառը, որ Հին

Աշխարհը այսքան ջանում մեզ գայթակղել: Սրա համար է, որ Վեհապետները մեզ Օգնության Ձեռք են մեկնում: Այս դժվարին ժամանակներում նրանք մեզ Ուսմունք են տալիս: **Ուսմունքը մեր քարտեզն է ու մեր կողմնացույցը:**

Եվ ահա մենք այժմ կանգնած ենք ճամփաբաժանին: Իսկ Բարու ուժերը և Չարի ուժերը սպասում են, թե դեպի ո՞ր կողմն ենք կատարելու մեր հաջորդ քայլը:



Ճշմարիտ եվ կեղծ հավատ

Համախոհների զրույցները մեր նավի տախտակամածին շարունակվում են:

- Կարո՞ղ է կյանքը շարունակվել առանց հավատի, առանց հավատի՝ առ Բարձրյալը, Անտեսանելին, Բանականը:

– Կարող է, սակայն այդ ժամանակ կյանքը կլինի դատարկ ու անտանելի ծանր: Հավատը մեր ողնաշարն է, մեր առանցքը, հիմքը: Հավատը թե՛ մեր նեցուկն է, թե՛ պաշտպանությունը, թե՛ դարմանը:

– Այդ բոլորը այդպես է, որ կա, հավատը պահապանում է մեզ կյանքի փորձությունների պահին: Բայց ինչպե՞ս առանց ապացույցների հավատալ Նրան, ինչ ո՛չ հնարավոր է տեսնել և ո՛չ էլ ուսումնասիրել:

– Երբ մեզանում առկա է հավատը, մեզ

այլևս բանական ապացույցներ պետք չեն, որովհետև հավատը ինտուիտիվ զգացողության մակարդակն է, որը ապրում է ոչ թե մարդու մտքում, այլ սրտում:

– Մենք պարզապես գիտենք, որ Աստված կա՛:

– Եթե կա Աստված, ինչո՞ւ է նա թույլ տալիս այսքան աղետներ և տառապանքներ:

– Մենք արդեն ասել ենք, որ աղետներն ու տառապանքները մարդն ինքն է ստեղծում: Ինչ որ մեր ներսում է, այդ էլ դրսում է: Մենք չափից դուրս ենթարկված ենք վախին ու ընկճվածությանը, վիրավորանքներին ու զայրույթին: Եվ գիտակցության այս բացասական վիճակները ի վերջո նստավծք են տալիս ֆիզիկական ոլորտում, ֆինանսական ոլորտում՝ միջպետական հակասությունների, պատերազմների, համաճարակների և բնական կատակլիզմների տեսքով: Մենք չենք ճգտում իմանալ աշխարհաստեղծման օրենքները, չենք զգում կապերը մեր սեփական արարմունքների

և այն աղետների միջև, որ թափվում են մեր գլխին: Այստեղից էլ՝ անաստվածությունը և բարոյազրկումը

– Իսկ եկեղեցի՞ն: Ամբողջ աշխարհում վիթխարի թիվ են կազմում տաճարները, կոստյոլները, սինագոգները, մզկիթները, դացանները: Ինչո՞ւ կրոնները չեն կարգավորում ամեն ինչ:

– Կրոնը և հավատը տարբեր բաներ են: Կրոնը կազմակերպում է Աստծուն երկրպագելու արտաքին ձևը: Հավատը ներքուստ ընդունումն է Աստծո ճշմարիտ գոյության:

Բայց եկե՛ք հարցնենք Վեհապետներին՝ ի՞նչն է, որ կփրկի աշխարհը ներկա պայմաններում:

Կրոնի և Հավատի թեման լուսաբանում է Տեր Հիսուսը.

«Եկեղեցեւ ինստիտուտը, որ կոչված է մարդկանց Աստվածային Օրենքի շրջանակներում պահելու, կորցնում է իր նշանակությունը, այնքանով, որքանով մարդիկ կորցնում են հավատը և հեռանում են բարոյական իդեալներից:

Մարդկության միակ փրկությունն այս պայմաններում վերադարձն է առ Աստված և ճշմարիտ հավատին՝ որպես գիտակցության վիճակ: **Աստծո ընկալումը՝ ոչ թե որպես**

եկեղեցիների սրբապատկերներում պատկերված ծերուկի, այլ որպես ներքին Լույսի, որ թափանցում է Արարված ամեն ինչի միջով եւ խորանին գտնվող բոլոր էակների սրտերում է, որ ընդունակ է մարդկությանը օգնության հասնելու՝ նրա զարգացման տվյալ փուլում:

Աստծո այն ըմբռնումը, որ Նա ոչ թե տաճարներում է ապրում, այլ իրենով լցրել է շրջակա ամբողջ տարածությունը, էվոլյուցիոն զարգացման տվյալ փուլում կարող է ընկալելի լինել մարդկանց մտքերի համար: Եվ այն քաոսում, որ այժմ տիրում է աշխարհին **Կայունության միակ կարգավորիչն ու երաշխավորը ներքին կառավարիչը կլինի մարդու խիղճը կամ Աստված, որ ներկա է յուրաքանչյուր մարդու ներսում**» (Տեր Հիսուս, 27 հունիսի 2013 թ.).

Սա Աստծո միանգամայն այլ ընկալում է՝ ի տարբերություն նրա, ինչ տալիս են կրոնները:

Աստված ո՛չ տաճարներում է և ոչ էլ սրբապատկերների վրա: **Նա մեր սրտում է:** Ուրեմն՝ Աստված միշտ մեզ հետ է. ցանկացած պահի մենք կարող ենք Նրան դիմել: Աստված մեր խիղճն է: Իսկ մեր խիղճը միշտ էլ գիտի՝ ճի՞շտ ենք վարվում, թե՞ սխալ

Կարևոր են ոչ թե ձևը, ծեսերը, այլ միմիայն մեր ձգտման անկեղծությունը և մեր հավատի աստիճանը: Մենք կարող ենք Աստծուն մեր խոսքերով դիմել, մեր իմացած աղոթքի կամ մանտրայի ցանկացած խոսքերով, կարևորն

այն է, որ դա ոչ թե ցուցադրական, մեխանիկաբար լինի, այլ լինի ամբողջ սրտով:



Աստված «իրենով է լցնում ամբողջ շրջակա տարածությունը»,-ինչպես ասում են Վեհապետները: Ուրեմն Աստված ոչ միայն մեր մեջ է, մեր սրտում, այլ նաև մենք ենք Նրանում: Մենք բոլորս Նրա մասնիկներն ենք, Նրա անսահման մեծ «մարմնի» «բջջիկները»: Աստված մեզանից է բաղկացած: Կարո՞ղ է արդյոք իր ազատ կամքով բջիջներից մեկը մյուս բջիջների հետ ոչ թե ներդեշանկության մեջ ապրել, այլ ապրել նրանց հաշվին: Երբ բջիջն այդպես է պահում իրեն, այն վեր է ածվում քաղցկեղայինի և դանդաղ, բայց անխուսափելիորեն ոչնչացնում է ամբողջ օրգանիզմը:

Ուրեմն, եթե մենք մի այլ մարդու մեջ չենք տեսնում Աստծուն, եթե մենք անբարո ենք վարվում՝ ոչ խղճի մտոք, սպանում ենք Աստծուն և Աշխարհի ամբողջ կառույցը: Եվ այդժամ վատ է բոլորի համար

– Ստացվում է, որ ճշմարիտ հավատը մեր փրկությո՞ւնն է:

– Վեհապետները դա են պնդում:

«Եթե դուք հավատում եք, եթե անկեղծ եք հավատում, դուք արդեն փրկված եք <...>

Միայն հավատի մեջ ուժեղագույնն է ունակ

հաղթահարելու ֆիզիկական աշխարհի ցանկացած ծուղակ և գայթակղություն» (Սանատ Կումարա, 20 հունիսի 2014 թ.):

«Մարդկության միակ փրկությունն այս (ժամանակակից) պայմաններում վերադարձն է դեպի Աստված և ճշմարիտ Հավատին՝ որպես գիտակցության վիճակ» (Տեր Հիսուս, 27 հունիսի, 2013 թ.).

Հավատը դեղամիջոց է վախի դեմ: Այն մեզ արիություն է տալիս, նվիրվածություն մեր իդեալներին, Աստծուն:

Հավատը վահան է: Այն անխոցելիության շնորհ է տալիս, ամենաճգնաժամային իրավիճակներում պաշտպանում է աշխարհի ավերիչ դրսևորումներից

Հավատը մեզ տալիս է ուրախություն, սեր, վստահություն, անդորր, Բարձրագույն Աշխարհի հետ հաղորդակցման երանություն:

Հավատը մեզ գործելու ուժ է տալիս: Իմաստավոր ապրելու:

Սեր առանց պայմանի և եսամոլական (էգոիստական) սեր

Սեր…

«Նոր կտակարանում» ասվում է .«Աստված սեր է»: Սակայն սիրո հասկացության մեջ մարդիկ միանգամայն այլ իմաստներ են դնում: Եվ այն, ինչ մեծամասնության կողմից որպես սեր է ընկալվում, չի համընկնում Աստծո հետ:

Այս սուրբ հասկացության մեջ շատ են

խեղաթյուրումները:

Մեր աշխարհը երկակի է: Բոլոր հատկանիշներն աղավաղված են: Եվ սրանց մեջ սերը բացառություն չէ:

Երբ մենք մեկին սիրում ենք՝ մեր ծնողներին, տղամարդկանց ու կանանց, երեխաներին կամ մեր խնամյալներին, առաջին հերթին դա անում ենք մեզ համար: Նրանց կողմից պատասխան զգացումներ ենք սպասում, որոշակի գործողություններ: Մենք փորձում ենք վերահսկել մեր սիրելիների կյանքը, այս պատճառով մեր փոխհարաբերությունները հաճախ հիշեցնում են պարան ձգելուն: Մենք պայմաններ ու պահանջներ ենք առաջադրում սիրո մեջ: Դրանով էլ ճնշում ենք մեր մերձավորին: Եվ երբ հասկանում ենք, որ մեզ սիրում են ոչ մեր ուզածի պես, տրամադրություններս ընկնում է: Բայց ո՞վ է մեղավորը: Մենք՝ ինքներս: Բացապարզման համար դիմենք Վեհապետներին:

«...այն, ինչ ձեզանից շատերը սեր են համարում, իրականում ամենևին էլ Սերը չէ:Այն զգացմունքը, որ դուք երբեմն սեր եք անվանում, իր նշանակությամբ ավելի մոտ է սեռական կամ սեռին հատուկ բնազդին: Եվ այդ զգացմունքը ոչնչով չի տարբերվում նրանից, ինչ զգում են կենդանիները կամ թռչունները: Ուստի նախ և առաջ հարկ է, որ

մտորեք, թե ինչպիսին է այն Սիրո որակը, որը դուք զգում եք: **Իսկական Սերը կապված չէ ո՛չ որոշակի սեռի, ո՛չ էլ ընդհանրապես որեւէ Սիրո առարկայի հետ: Դա ներքին զգացմունք է, որը կապ չունի որեւէ էակի կամ առարկայի հետ. դա Սերն է ամեն ինչի նկատմամբ, ամբողջ կյանքի, համայն Տիեզերքի նկատմամբ:** Եվ ձեզնից շատերը, երբ գտնվում են բնության գրկում, ունակ են դառնում բարձրացնելու իրենց թրթիռները՝ մինչև ճշմարիտ Սիրո իսկական զգացմունքի մակարդակը:» (Սիրեցյալ Սուրիա, 4 հուլիսի, 2006 թ.):

Բացարձակապես անկարևոր է՝ սիրո՞ւմ են մեզ, թե՞ ոչ: Իսկական սերը կախվածություններ չունի, այն պարզապես հորդում է դեպի աշխարհ՝ առանց պայմանների, առանց սպասումների: Այն առանց սահմանափակման տարածվում է մեզ շրաջապատող բոլորի ու ամեն ինչի վրա:

Իսկական սիրո զգացումը նույնն է, ինչ երանությունն ու ներդաշնակությունը:

«Երբ մարդ համակվում է Սիրո Աստվածային զգացումով, ապրում է **անառիթ երջանկության վիճակ, կյանքն իմաստավորվում է, լցվում հանգստությամբ, ներդաշնակությամբ:** <...>

Դուք պատրաստ եք գրկախառնվելու ողջ աշխարհի հետ, և դուք պատրաստ եք օգնություն ցույց տալու ամբողջ աշխարհին:

Ձեզ համակում է անառիթ երջանկությունը, ուրախությունը, տալու ցանկությունը, տալու ու տալու ձեր Լույսը, ձեր Սերը: Ձեր Սերը նվիրաբերելու աշխարհին՝ **դրա դիմաց ոչինչ չպահանջելով**» (Տեր Մայտրեա, 27 մայիսի 2005 թ.):

Եթե մարդիկ միայն այսպիսի զգացումներ ունենային, Աշխարհում իսկական հրաշք տեղի կունենար: Մեր մոլորակը շատ արագ կմաքրվեր և կվերափոխվեր: Որովհետև **չկա ավելի զորեղ մի ուժ, քան Սերն է**:

Սա շատ լավ հասկանում է Հին Աշխարհը, այդ պատճառով էլ անասելի մեծ ջանքեր է գործադրում մեր գիտակցության մեջ ստերեոտիպեր ներդնելու համար, որոնք ամբողջապես խեղաթյուրում են իսկական Սիրո իմաստը:

«Սեքսի, պոռնոգրաֆիայի, սեռերի միջև փոխհարաբերության ստերեոտիպերի ամբողջ արտադրանքը, որ պրոպագանդվում և տարածվում է տեղեկատվության զագնգվածային միջոցներով, ուղղված են հենց նրան, որ ձեզ ետ պահի Աստվածային Սիրո հայտնությունից:

Թվում է, թե վնասակար չէ, եթե դիտում եք. ձեր մեջ սեռական բնազդը բավարարելու բնազդն է արթնանում: Թվում է անմեղ մի բան է կնոջ մերկ մարմնին նայելը, երբ գովազդվում են ձեր հոգևոր առաջընթացին ամենևին պետք չեկող առարկաներ:

Բայց ձեր գիտակցության մեջ բույն է դնում ատելությունը Աստվածային Սիրո հանդեպ: Դուք ձեր կամքով խցանում եք այն զտիչները, որոնք պարփակված են ձեր գիտակցության մեջ և խանգարում եք ձեր կյանքում դրսևորելու իսկական Սիրո հատկանիշը:

Մտորե՛ք, արդյո՞ք այդքան անվնաս է ձեզ համար, երբ դիտում եք պոռնոգրաֆիական ֆիլմեր, հանդուրժում հայհոյախոսություն, ներկա գտնվում այնպիսի մարդկանց միջավայրում, որոնք կեղտոտ մտքեր ու արարքներ են թույլ տալիս կանաց և սեռերի փոխհարաբերության առումով:

Յուրաքանչյուր այդպիսի բացասական

թրթիռ նպաստում է Աստծո Սիրո հատկանիշից ձեր հեռացմանը:» (Անվերապահ սիրո նեկայություն, 7 մարտի, 2005թ.):

Աստվածային Սիրո և մեզ դրսից մեր վզին փաթաթվող «ազատ սիրո» սուռոգատի տարբերությունը նույնն է, ինչ կյանքի և մահվան տարբերությունը:

Մենք Աշխարհում Աստծո էներգիայի փոխադրողներն ենք: Ամենաբարձրակարգ էներգիան ստանալով՝ մենք այն գունազարդում ենք մեր ձեռքբերումներով կամ մեր անկատարություններով և ապա տալիս ենք աշխարհին:

Այն սիրո որակը, որ մենք կարող ենք հաղորդել աշխարհին, պայմանավորված է մեր գիտակցության մակարդակով, մեր հոգևոր մակարդակով, դաստիարակությամբ, կրթությամբ: Երբ մենք աշխարհին հաղորդում

ենք ավելի կատարյալ սեր, դրանով իսկ բարելավում ենք մեր շրջապատը: Ի՞նչ հստակ է: Չէ՞ որ Աստված Սեր է:

Աստվածային աներկբա Սերն ապրելով, մենք մեր աշխարհը լիացնում ենք Բարձրագույն աշխարհների կատարելությամբ:

Կարելի՞ է արդյոք քո մեջ զարգացնել առավել կատարյալ Սերը:

Հնարավոր է: Ճիշտ այնպես, ինչպես մենք մարզասրահում մարզում ենք մեր մկանները, այդպես էլ կարող ենք կոփել ճշմարիտ Սերը:

Օրվա մեջ գոնե 2-3 րոպե կարող ենք նվիրել ճշմարիտ Սիրով ապրելուն: Սկզբում՝ մեկին՝ սիրելի մի մարդու, երեխայի, կենդանու և նույնիսկ բույսի նկատմամբ Սիրով ապրելուն: Մարզումներից հետո այդ զգացումը կարելի է ընդլայնել ամբողջ ընտանիքի, բնության

սիրված անկյան, քաղաքի, երկրի և ամբողջ մոլորակի ծավալով:

«Մեր կյանքի կարևորագուն խնդիրը մեր **սիրո զգացումը վերագտնելն է՝ ինչ էլ լինի:** եթե դուք գտնվում եք մարդկանց միջավայրում, փորձե՛ք սիրո զգացում տածել ձեզ շրջապատող մարդկանց հանդեպ: Մարդկանց սիրե՛ք ոչ այն պատճառով, որ նրանք ինչ որ բան են արել կամ կարող են անել, տածե՛ք ոչնչով չպայմանավորված Սեր: <...>

Ու կգա այն օրը, երբ դուք համատարած, պատճառ չունեցող Սեր կզգաք ձեզ շրջապատող ամենայն ինչի, Աշխարհի երեսին ապրող բոլոր մարդկանց, հենց Աշխարհի, բնության, ամպերի, երկնքի, անձրևի, արևի հանդեպ

Դուք կլցվեք Սիրո և ձեզ շրջապատող ամեն ինչի հետ Միավորված լինելու զգացումով» (Սիրեցյա Ջվալ Կուլ, 18 ապրիլի 2005 թ.):

Երբ մենք կենտրոնացած ենք մեզ և մեր խնդիրների վրա, մենք չենք կարող եսասիրական սիրուց վեր բարձրանալ: Երբ մենք լեցուն ենք Սիրով՝ առանց պայմանների, երբ մեզ մտահոգում է ամբողջ մոլորակի բարեկեցությունն ու ներդաշնակությունը, թեփի պես ցիրուցան են լինում բոլոր անձնական խնդիրները: Այսպես է գործում

բարձրագույն, ճշմարիտ սիրո Օրենքը:

Եվ եթե մենք ուզում ենք Աստծուց և Վեհապետներից ինչ- որ բան խնդրել, ապա դա թող դա առաջին հերթին լինի ճշմարիտ Սերը սովորելու ցանկությունը:

Սերը բոլորի համար երջանկության ակունք է:

Աշխարհը Սիրով կփրկվի:

Տիեզերք ի երեք կետ ձկները

Երեք հիմնարար Աստվածային օրենքները, որոնց վրա պահվում է Տիեզերքը.

- դա Գերագույն Բարոյական Օրենքն է

– Կարմայի կամ պատճառի ու հետևանքի օրենքը

– և վերամարմնավորման (ռեինկարնացիայի) Օրենքը կամ հոգիների զարգացման Օրենքը:

Այս Օրենքների գիտակցումը մեզ թույլ կտա մեր էվոլյուցիոն զարգացման ուղղությամբ դեպի առաջ քայլ անելու, բառի բուն իմաստով թռչելու դեպի Նոր Դարաշրջան: Կյանքի իմաստի տաժանակիր որոնումներին կփոխարինի ձեր իրական

բնույթը հասկանալու ընկալումը, իմաստավորելը, թե ինչու ենք եկել այս աշխարհ և ինչին պետք է ձգտենք, որպեսզի դառնանք մեր ճակատագրի արարիչը և մեր մեջ վերականգնենք մեր նույնությունը Աստծո հետ:

Առանց այս հիմնարար Օրենքների իմացության մենք չենք կարող առաջ տանել մեր զարգացումը, այլ աստիճանաբար կդեգրադացվենք վերամարմնավորումից վերամարմնավորում, մինչև Վերին Ուժերը մեր հոգիները զարգացման համար անպիտան կհամարեն և կուղարկեն «վերաձուլման»: Բայց ինչո՞ւ կորցնենք մեր հոգու բոլոր նվաճումները, որ այնքան մեծ դժվարությամբ կուտակել ենք միլիոնավոր տարիների ընթացքում: Որ ամեն ինչ սկսենք զրոյի՞ց: Եվ հետո էլի միլիոնավոր տարիներ քայլել էվոլյուցիայի նույն պտույտներո՞վ: Այդ արդեն չեղավ: Ավելի լավ է շարժվենք Նոր Դարաշրջանի կանոններով ու ավելի մանրամասն իմանանք Աստվածային Օրենքները:

Գերագույն Բարոյական Օրենքը

Վեհապետները տագնապի ազդանշան են հնչեցնում: Նրանք ասում են, որ մեր այս ժամանակը ճգնաժամային շրջադարձային կետ է մարդկության զարգացման մեջ: Կամ կշարունակենք բավարարել մեր կենդանական բնազդները և կկործանվենք հերթական կատակլիզմում կամ մեր գիտակցությունը

կուղղենք դեպի հավերժական արժեքները և կշարունակենք մեր ուղին դեպի Նոր Աշխարհ:

Այժմ ավելի քան երբեք կարևոր է մեզնից յուրաքանչյուրի ընտրությունը: Բայց, որպեսզի հասկանանք, թե ինչպիսին պետք է լինի ընտրությունը մեր կյանքի ցանկացած իրադրությունում մենք պետք է կարողանանք տարբերակել:Մենք արդեն տիրապետում ենք տարբերակման գործիքներին, քանի որ Աստված մեր մեջ է, մեր խիղճը ապրում է մեր Սրտի մեջ:

«...այն ընտրությունը, որ կատարում եք տառացիորեն այս օրերի ընթացքում, որոշում է ձեր հետագան, ձեր անհատական զարգացման ընթացքը և էվոլյուցիայի այն ընթացքը, որը տեղի կունենա Երկրի վրա:

Ձեզ ոչինչ չի արգելվում բայց ձեր ներսում առկա բարոյական օրենքը ինքը պետք է որոշի, թե ինչն է օգտակար, ինչը՝ ոչ: Իսկ զանազանման շնորհը, որն այժմ եկել է առաջին պլան, օդի ու սննդի պես անհրաժեշտ է ձեզ: Դուք պետք սովորեք զանազանել: Եվ ձեր ներկա կյանքը վճռորոշ նշանակություն ունի ձեր հոգու էվոլյուցիայի համար: Քանզի ձեր ներկա կյանքում կատարած ընտրությունից է կախված ձեր հոգու էվոլյուցիայի հետագա ամբողջ ընթացքը: Կամ դուք հսկայական

տեմպերով առաջ կգնաք կամ քարշ կգաք էվոլյուցիայի պոչից:

Եվ ես չեմ զարմանա, եթե մոտակա ձեր մարմնավորումներից մեկում ձեր կյանքը նմանվի Նոր Գվինեայի պես մի վայրում ապրող պապուասների կյանքին, քանի որ ձեր ներկա կյանքի նախապատվությունները հեռու չեն այն մակարդակից, ինչ ունեն պապուասները: Ահա նորից շարունակում եք ձեր էվոլյուցիայի փակուղային ճյուղը՝ նստելով խարույկի մոտ և խժռելով ձեր բաժին միսը: (Սիրեցյալ Զրադաշտ, 20 հուլիսի,2006թ.):

Աննախանձելի հեռանկար... Հարկավոր է շտապ ինչ - որ բան անել, որ ամբողջ ուժով միանա ձեր զանազանելու շնորհը: Վեհապետներն առաջարկում են լռությունից սկսել...

«Եկել է ժամանակը, երբ դուք պետք է որոմը հատիկից ջոկեք այն ամենում, ինչ ձեզ շրջապատում է, և հրաժարվեք անաստված ամեն ինչից: Ես հասակնում եմ, որ երբ դուք գտնվում եք առաջավոր տեխնոլոգիաների համակողմանի ճնշման տակ, որոնք օրվա մեջ 24 ժամ հեռուստա-ռադիոալիքներով բթացնում են ձեր գիտակցությունը, ապա այդ իրավիճակում դժվար է կողմնորոշվելն ու հասկանալը, թե ինչպես վարվեք:

Մենք ձեզ սովորեցնում ենք զանազանելու և ճիշտ ընտրություն կատարելու կարողություն: Եվ առաջինն ու ամենախելացին այն կլինի, որ սահմանափակեք տեղեկատվական զանգվածային միջոցների ազդեցությունը ձեր գիտակցության ու ենթագիտակցության վրա: Երբ այդ համակողմանի ճնշումը դադարեցվի, դուք ձեռք կբերեք զանազանելու և կողմնորոշվելու կարողություն:

Ձեր Գերագույն Ես-ը՝ ձեր ներսի Աստված,

չի կարողանում ձեզ հետ խոսել: Համբարձյալ Վեհապետները չեն կարողանա ձեզ հետ խոսել, քանի դեռ գտնվում եք այն տեղեկատվական աղբի խիտ շրջափակման մեջ, որը տոննաներով օրվա ընթացքում ձեր գլխին է թափվում հեռատեսիլի էկրաններից, ռադիոընդունիչներից, թերթերից, համացանցից:

Դուք այնպիսի զգացողություն եք ունենում, թե տեղեկացված եք աշխարհի վերջին իրադարձությունների մասին: Ձեզ տեղեկատվություն է մատուցվում բոլոր բնագավառների նոր բաների մասին: Սակայն ամենագլխավոր նորությունները մատչելի չեն Երկրի բնակչության մեծամասնությանը, քանի որ դրանք չեն հեռարձակվում որևէ ռադիո կամ հեռուստաալիքով: Եվ ամենակարևորն այն **«sos» ազդանշանն է, որ առաքում են մոլորակն ու նրա վրա եղած ողջ կենդանական աշխարհը:**

Դուք նմանվում եք խելակորույս նավապետի, որ նավը վարում է փոթորկի ժամանակ: Մարդկության ընդհանրական գիտակցականն ու ընդհանուր ենթագիտակցականը նման են այդ խելակորույս նավապետին: Եվ Ցանկացած պահի նավը՝ ձեր մոլորակը, կարող է բախվել սրածայր խութերի ու խորտակվել» (Սիրեցյալ Կութհումի, 2 հուլիս 2009թ.):

Միայն մեր գիտակցությունը մաքրելով է, որ մենք կսովորենք որոմը հատիկից ջոկել և հեռանալ մեզ շրջապատող պատրանքից դեպի Աստվածային իրականություն: Երբ մենք մեր մեջ գտնենք ճիշտ կողմնորոշիչներ, դրանք կամերտոնի հնչյունի պես մեզ կուղեկցեն կյանքի միջով: Եվ այն, ինչ համահունչ չէ մեր սրտի կամերտոնի ձայնին, կանցնի մեր արտաքին գիտակցության կողքով և չի աղտոտի մեր հոգին: Ինչպես ասում է Սանատ Կումարան.«Բուդդան կյանքի միջով անցնում է անձայն, ոչ ոքի կողմից չնկատվելով, և ոչ մի կյանքային կեղտ չի դիպչում նրա աուրայի ոսկյա ամպին» (27 դեկտեմբերի, 2011 թ.).

Բարձրագույն Բարոյական Օրենքը վաղուց է հայտնի մարդկությանը: Բոլոր բարոյական չափորոշիչները տրվել են հազարավոր տարիներ առաջ: Վեհապետները մեզ հիշեցնում են Աստվածային ճշմարտությունները՝ դրանք լրացնելով այն պայմաններով, որ հատուկ են մեր ժամանակին:

«Ես հիմա ձեզ կհիշեցնեմ, թե ինչպես պետք է ձեզ պահեք: Ձեր կյանքում առաջնահերթ նշանակություն պետք է տաք Աստծուն և Նրա Օրենքը պահելուն:

Ձեր կյանքում չպետք է ունենաք կուռքեր, որոնց ավելի շատ եք խոնարհվում, քան Աստծուն:

Ուրիշների հետ չպետք է վարվեք այնպես, ինչպես չէիք ուզենա, որ վարվեին ձեզ հետ:

Դուք չպետք է կատարեք այնպիսի արարքներ, որոնք հակառակ են ուղղված համայն Տիեզերքում գործող Աստծո Օրենքին:

Եվ Առաջին՝ ամենակարևոր պատվիրանը Սերն է մերձավորի նկատմամբ. Սեր այն ամենի նկատմամբ, ինչը ստեղծված է Աստծո կողմից՝ քարի, բույսի ամեն գազանի ու կենդանու նկատմամբ: Դուք չպետք է վնաս պատճառեք բնությանը: Դուք չպետք է վնաս պատճառեք Երկիր մոլորակին:

Դուք պետք է Սեր տածեք ամբողջ Արարչության նկատմամբ

Եվ առավել ևս ձեր սրտերում պետք է պահպանեք բարոյական Օրենքը՝ թույլ չտալ ցանկասիրություն, չարը չկամենալ ձեր մերձավորին, սուտ չխոսել, չնախանձել, լինել

ազնիվ ու արդարամիտ:

Իսկ այնպիսի մեղքն, ինչպես մարդու կամ կենդանու սպանությունն է, ես արգելում եմ խստագույնս: Որևէ կենդանու չպետք է սպանել ոչ մի պատրվակով:

Հիշե՛ք կարմայի մասին, որ այսօրվա իմ նախազգուշացումից հետո մեծանալու է տասնապատիկ անգամ:

Բայց ձեր բարի գործերով պայմանավորված կարման է մեծանալու տասնապատիկ անգամ:

Ես եկա, որպեսզի ձեզ հիշեցնեմ այն Կտակի մասին, որ Իմ կողմից տրվել է Մովսեսին և անցյալի բոլոր մարգարեներին:

Ես այսօր ձեզ ասում եմ իմ խոսքը, որ դուք կարողանաք ավելի լավ հասկանալ այն, ինչը գրվել և արտագրվել է գրքում և աղավաղվել է արտագրողների կողմից:

Այժմ նոր ժամանակներ են, ու Աստծո և ողջ Արարչության առաջ ունեցած ձեր ունեցած պարտավորություններն աճում են բազմակիորեն:

Մի՛ մոռացեք իմ ասածները: Պահե՛ք այս ուղերձը երևացող տեղում և վերընթերցե՛ք այն:

Դուք պետք է անգիր հիշեք իմ

Պատվիրանները:

Այլևս չի կարելի զբաղվել անաստվածահաճո գործերով: Իմ համբերությունը հասել է սահմանին» (ԵՍ ԵՄ, ՈՐ ԵՄ, 8 հունվարի, 2008 թ.):

Այն, ինչ ասում են Վեհապետները, մենք արդեն գիտենք: Նորն այն է, որ մեր պատասխանատվությունն է մեծանում տասնապատիկ: Բայց դրա հետ մեկտեղ տասնապատիկ մեծանում են մեր հնարավորությունները, մեր ճիշտ ընտրություն կատարելու և բարիա գործեր կատարելու էներգիան:

Սրա համար անհրաժեշտ են միայն մեր ներքին ջանքերը: Ինչպես որ սպորտսմեններն են մարզում իրենց մկանները, մենք պետք է մարզենք մեր հոգու մկանները:

Եթե մենք անկյան գլուխ չենք տեսնում Աստծուն, Բարոյական Օրենքի պահպանումը, մեզ համար ոչ մի զարգացում էլ չի լինի:

Սա վերաբերում է նաև պետությանը:

Եթե պետության հիմնական օրենքում Աստված չկա, ապա հասարակության մեջ աստիճանաբար կատարվում է բարոյական ետընթաց (դեգրադացիա), բոլոր բարձրագույն հասկացությունները ջնջվում են՝ վերածվելով իրենց հակադրությանը: Առանց բարոյական բաղկացուցչի՝ ընտանիքը դադարում է կատարել սերնդի շարունակության իր ֆունկցիան: Ամուսինները դավաճանություններ ու այլասերություն են

թույլ տալիս, ընտանիքները քանդվում են: Առանց բարոյական բաղկացուցչի հայրենասիրությունը վեր է ածվում նացիոնալիզմի և ապա՝ ֆաշիզմի: Առանց բարոյական բաղկացուցչի ծաղկում են կորուպցիան, զողությունը, փողերը ծախսվում են ոչ թե մարդկանց կյանքի բարելավման, այլ առանձին մարդկանց գրպանի հարստացմանը: Այն մարդիկ, որ հիմնականում նյութական բարիքների ետևից են ընկած և մոռացել են Աստծո մասին, չեն պաշտպանի իրենց երկիրը, և այդպիդի պետությունը կկործանվի:

Մեր քաղաքականությունը ոչնչացումից կփրկի միայն Բարձրագույն Բարոյական Օրենքին հետևելը:

> «Միակ բանը, որ կարող է գոյություն ունեցող քաղաքակրթությունը փրկել ոչնչացումից, դա հնարավորինս շատ անհատ մարդկանց բարձրանալն է գիտակցության նոր մակարդակի: Տասը արդարակյաց մարդ կարող են փրկել քաղաքը: Հազար արդարակյացներ կարող են աշխարհը փրկել»(Սիրեցյալ Սերապիս, 31 դեկտեմբերի, 2008 թ.):

Կարմայի օրենքը

Մեր ուսուցիչները պնդում են՝ Կարմայի Օրենքի գիտելիքն է այն առաջին քայլը, որ անհրաժեշտ է մարդուն խղճի մտոք ապրելու համար: Եթե մեզ փոքր տարիքից սովորեցրած լինեին այս Օրենքը, մենք չէինք կատարի այն արարքներից շատերը, որոնց համար հիմա զղջում ենք:



Արևելյան «կարմա» բառը լայնորեն գործածվում է ամբողջ աշխարհում՝ սովորաբար հետևյալ բառակապակցությամբ՝ «վրա հասավ կարման»: Ի՞նչ է կարման, և ինրո՞ւ է այն վրա հասնում:

Կարմա նշանակում է «գործողություն» կամ «գործունեություն»: Յուրաքանչյուր գործողություն ունի իր արդյունքը, հետևանքը: Այս պատճառով էլ Կարմայի Օրենքը այլ կերպ մեկնաբանվում է որպես պատճառի ու հետևանքի Օրենք: Ժողովրդական իմաստությունը այս Օրենքի իմաստը պահպանել է «ինչ ցանել ես, այն կհնձես» ասացվածքով:

Կարմայի Օրենքը եկել է հին հնդկական

Վեդաներից, որոնք շատ ավելի հին են, քան քրիստոնեական Աստվածաշունչը: Ինչպես հայտնի է, քրիստոնեությունը չի ընդունում ո՛չ Կարմայի և ոչ էլ ռեինկարնացիայի Օրենքները, որով էլ հենց արգելակում է իր հետևորդների զարգացումը:

Ոչ մի բարի պապիկ մեզ չի փրկի մեր մեղքերից. Կարմայի Օրենքը անաչառ է ու անողոք: Եվ եթե մենք անաստված գործողություններ ենք կատարել, հատուցելու ենք դրանց համար: Բայց նաև ինքներս կարող ենք մեզ դուրս քաշել բացասական կարմայի ճահճից:

Կարման իրենից ներկայացնում է մեր բոլոր գործողությունների ու դրանց հետևանքների ամբողջությունը, ինչպես ընթացիկ, այնպես էլ նախորդ վերամարմնավորումներում: Մեր կողմից ստեղծված ամբողջ կարման բնորոշում է մեր ապագան:

Կարման ինչ-որ ամխուսափելի ճակատագրականություն չէ: Մենք զոհը չենք մեզ հետապնդող ճակատագրի: Տառապանքը մեր սեփական մեղքերի վարձն է: **Յուրաքանչյուր մարդ ինքն է կերտում իր ճակատագիրը՝ գործելով համաձայն իր ազատ կամքի:** Եթե բարի գործեր ենք կատարում, ապա դնում ենք մեր լավագույն

ապագայի հիմքերը: Եթե մեղք ենք գործում, կհնձենք համապատասխան հետևանքները, և մեզ հետ կվարվեն այնպես, ինչպես մենք ենք ինչ-որ ժամանակ վարվել ուրիշների հետ:

«Մարդը շատ կարճ հիշողություն ունի, և որպես կանոն, նրա համար շատ դժվար է նշմարել այն ուղղակի կապը, որ գոյություն ունի կյանքում նրա գործած արարքների և այդ արարքների հետևանքների միջև: Սակայն հատակապես հենց դա է կազմում Կարմայի կամ Հատուցման օրենքի հիմքը, պատճառահետևանքային կապի օրենքի հիմքը, որն առկա է գործողության և այդ իսկ գործողության հետևանքի միջև:

Քանի՛- քանի անգամ է ինձ կամ հատկապես Մայր Մարիամին վիճակվել լսելու մարդկանց աղաչանքը, որ ամոքենք իրենց տկարությունները… Երբ լուրջ հիվանդությունը տիրում է մարդուն և վնասում նրա մարմնական տաճարը, ապա մարդը պատրաստ է դառնում մեծ զոհողությունների, որպեսզի ազատվի այդ հիվանդությունից: Նա իրենից դուրս փնտրում է բուժարարների, ովքեր ունակ կլինեն օգնելու իրենց:
Ձեր յուրաքանչյուր արարքը, որը չի համապատասխանում Աստծո կամքին, բերում է նրան, որ Աստծո էներգիան, որից դուք մշտապես օգտվում եք, և առանց որի պարզապես չեք կարող գոյություն ունենալ, երանգավորվում է ձեր այդ անկատար գործողությամբ:

Եվ որքան ավելի շատ եք կատարում այդպիսի անկատար գործողություններ, այնքան Աստծո էներգիան ավելի ցածր թրթիռներ է ձեռք բերում: Այդ էներգիան ոչ մի տեղ չի կորչում, այլ պահպանվում է ձեր աուրայում, ձեր զգացմունքնային, մենթալային և եթերային մարմիններում:

Եվ այդ էներգիան ծառայում է որպես մագնիս, որը շրջապատի արտաքին աշխարհից դեպի ձեզ է քաշում նմանատիպ էներգիաներ: Այդ պատճառով, եթե դուք որևէ մեկին նեղացրել եք, ապա վաղ թե ուշ այդ էներգիան դեպի ձեզ կքաշի կյանքի մի իրադրություն, որում ձեզ կնեղացնեն»(Սիրեցյալ Հիլլարիոն, 10 ապրիլի, 2005 թ.):

Ստացվում է, որ մեր բոլոր անարդարացի արարքների համար պետք է հատուցենք: Իսկ հնարավո՞ր է արդյոք ինչ-որ ձևով ազատվել կարմայից:

Իհարկե, կարելի է. այդ մեխանիզմը նախատեսված է Տիեզերքի կողմից:

Վեհապետներն ասում են, որ մենք կիսով չափ կարող ենք կարման թեթևացնել մեղքը գիտակցելով և անկեղծորեն ապաշխարելով: Այս դեպքում շատ կարևոր է որոշել, որ այլևս երբեք չենք գործելու այնպիսի արարքներ, որոնց համար ապաշխարել ենք և խստորեն հետևենք այս որոշմանը:

> «Սիրեցյալնե՛ր, Աստված չի ուզում ձեզ պատժել: Նա ուզում է, որ դուք ընդունեք ձեր սխալները և ապագայում չկրկնեք դրանք: Չկա մեղսագործ, որ ապագա չունենա: Եվ երբեմն այն մարդը, որ ընդունել է իր սխալները և ապաշխարել է, մարդկության համար ավելի շատ բան կարող է անել, քան այն մարդը, որ Աստծո պատիժը սրտում՝ ոչ մի բարի գործ չի կատարում (Վեհապետ Կութհումի, 17 հունիսի, 2011 թ.)

Կարմայի երկրորդ կեսը մենք կարող ենք վերացնել անշահախնդիր գործունեությամբ, որը կախված չէ մեր աշխատանքի արդյունքից, այսինքն՝ ծառայելու ուղիով, ինքնազոհ աշխատանքով՝ առանց ինքներս մեր մասին մտածելու:

Այս կերպ առաջին տեղում է հայտնվում այն շարժառիթը, որը ցանկացած գործողություն կատարելիս մեզ առաջ է տանում:

«...Երբ ձեր շարժառիթը ճիշտ է ընտրված, և դուք ճիշտ ուղղությամբ եք շարժվում, դուք շատ արագ կարող եք մշակել ձեր կարման» (Սիրեցյալ Սուրիա, 7- հուլիսի, 2007 թ.):

«...նաև կամենում եմ ձեզ մի շատ կարևոր խորհուրդ տալ, որով առաջնորդվելով՝ կկարողանաք շատ արագ մեծացնել ձեր բեռնաթափած կարմայի տոկոսը: Ամեն անգամ, երբ կյանքում ձեր առաջ այլընտրանք կլինի, թե ինչպես վարվել, աշխատե՛ք հասկանալ այն շարժառիթը, որը ձեզ դրել է այդ այլընտրանքի առաջ: Եվ եթե դուք ձգտում եք անել այնպիսի մի բան, որ լավ լինի անձամբ ձեզ համար, ապա սխալ շարժառիթ ունեք, և ձեր ընտրության հետևանքը կլինի այն, որ կմեծացնեք ձեր կարմայական բեռը»:

Իսկ այն դեպքում, երբ առաջնորդվում եք այնպիսի շարժառիթով, որ լավ լինի ուրիշ մարդկանց կամ այլ կենդանի էակների համար, ապա, եթե նույնիսկ ձեզ թվա, թե ձեր ընտրությունը կորստաբեր կլինի ձեզ համար և բոլոր

մարդկային օրենքներով ու տարրական տրամաբանության տեսակետից ոչ շահավետ, ապա մի՛ վիատվեք: Աստվածային տրամաբանության տեսակետից դուք ճիշտ ընտրություն եք կատարում, և այն անխուսափելիորեն կհանգեցնի ձեր կարմայական բեռի թեթևացմանը: Դուք կորցնում եք փոքրում, բայց շահում մեծում: Ասենք, օրինակ, դուք քայլում եք լեռնային կածանով և, ձեր առաջ հանկարծ հայտնվում է մեկը, որը ձեր օգնության կարիքն ունի: Դուք զբաղվում եք նրան օգնելով և ժամանակ եք կորցնում: Արևը մայր է մտնում, և դուք ձեր ուղուց ետ եք մնում: Բայց եթե հագուրդ չտաք ձեր ափսոսանքի զգացմանը, ապա վաղը ձեր առջև կբացվի մի նոր ճանապարհ, որի մասին առաջ գաղափար չունեիք, և որով առաջանալով՝ դուք անհամեմատ ավելի շուտ տեղ կհասնեք, քան ինքներդ նախապես պլանավորել էիք:

Ահա այսպես է գործում Կարմայի Օրենքը: (Հաութամա Բուդդա, 1 հունվարի, 2007 թ.»:

Պարզվում է՝ Կարմայի Օրենքը դաժան և անխիղճ դատավոր չէ, այլ առաջին հերթին մեր հոգուն ամենալավ հնարավորություններն է ընձեռում զարգանալու և շարժումն արագացնելու համար: Տեր Սուրիան մեզ ոգևորում է մեր Ճանապարհին.

«Այո՛, սիրեցյալնե՛րս ձեր կարման, որքան էլ այս պնդումը ձեզ տարօրինակ թվա, ձեր հոգիների համար զարգացման շատ լավ հնարավորություններ կընձեռի:

Կարման ձեզ համար մարզիչի դեր կկատարի, որը ձեզ անընդհատ ծանրաբեռնում է եւ ձեզ թույլ չի տալիս թուլանալ: Այսպիսով դուք մշտապես լավ ձևի մեջ եք լինում և պատրաստ եք լինում ինքներդ ձեզ գերազանցելու և Աստվածային հատկանիշներ ձեռք բերելու գործին:» (26 մայիսի, 2005 թ.):

«Մի՛ վախեցեք դժվարություններից, որոնք կհանդիպեն ձեր ճանապարհին: Բոլոր անհաջողությունները և չնախատեսված

իրավիճակները պետք են ու անհրաժեշտ են ձեր հոգու զարգացման համար: Դուք չեք կարող զարգանալ, եթե ամեն օր չբախվեք չկանխատեսված իրադրությունների հետ և չհաղթահարեք կյանքի դժվարությունները: Միայն մեռյալն է, որ չի կարող զգալ կյանքի հաճույքները և տառապանքները կյանքի այլևայլ իրավիճակներում: **Ուրեմն, ուրախացե՛ք այն ամենով, ինչին բախվում եք ձեր կյանքերում եւ մի՛ վախեցեք փոփոխություններից»** (24 ապրիլի, 2006 թ.):

Շնորհակալությամբ ընդունենք Վեհապետների խորհուրդները և գործի անցնենք՝ ազատագրվենք բացասական կարմայից և բարի կարմա ձևավորենք գիտակցության գալու և մեր սխալների համար ապաշխարելու միջոցով ու նաև ճիշտ ընտրություններ կատարելու, մարդկանց ու մոլորակի վրա գոյություն ունեցող ամենայն կենդանականի հանդեպ անշահախնդիր հոգատարություն ցուցաբերելու միջոցով: Կարմայի Բարեգութ, Աստվածային Օրենքը ամենահետին մեղավորին անգամ հույս է պարգևում, թե ամեն ինչ կարելի է փոխել: Միայն ջանք է պետք գործադրել:

Վերամարմնավորման (Ռեինկարնացիայի) Օրենքը

Մեր ամբողջ կյանքում մենք ինչ-որ բան ենք սովորում, ճանաչում ենք աշխարհը, զարգանում ենք արհեստների մեջ, կատարելագործվում ենք հոգեպես: Եթե կյանքի իմաստը կատարելագործումն է, ապա մի կյանքը բավարար չէ իդեալին հասնելու և Տիեզերքի բոլոր գաղտնիքներն իմանալու համար:

Մի՞թե Աստված այնքան ոչ ռացիոնալ է կարգավորել մարդկային կյանքը, որ նա գա աշխարհ, ինչ-որ աննշան գիտելիք ու փորձ ձեռք բերի և հետո գնա դեպի չգոյություն:

Առհասարակ՝ ինչո՞ւ կատարելագործվենք, եթե բոլորս էլ մեռնելու ենք: Ինչ-որ բան կատարվո՞ւմ է արդյոք մեզ հետ մահից հետո: Ո՞րն է կյանքի իմաստը:

Այս և այլ հարցերի պատասխանում է ռեինկարնացիայի Օրենքը (նույն ինքը՝ վերամարմնավորման Օրենքը)՝ Կարմայի Օրենքի հետ մեկտեղ: Պարզվում է՝ մենք ոչ միայն և ոչ այնքան նա ենք, ում տեսնում ենք հայելու մեջ:

Նախ և առաջ մենք աչքի համար

անտեսանելի հոգի ենք, անհատականություն: Մեր անհատականությունը ապրում է կոշտ և նուրբ նյութական մարմիններում: Այդ մարմինները շնչավորված են և կարող են զարգանալ միայն հավիտենական հոգու ներկայության, մեր մեջ եղած Ատծո անմահ մասնիկի շնորհիվ: Երբ մեր կոպիտ ֆիզիկական մարմինը «կաշվե կոստյումի» նման մաշվում է, հոգին նրան լքում է նուրբ մարմնի մեջ: Այդ պահն անվանում են մահ: Նուրբ մարմնում պահպանվում են մեր բոլոր մտքերը, զգացմունքները, ցանկությունները, մեր կարմայական ամբողջ վաստակն ու չվաստակածը: Հենց դրանք էլ որոշում են, թե ինչպիսին է հաջորդ «կաշվե» մարմինը, որի մեջ մտնելու է մեր անմահ հոգին: Այդ պահն անվանում են «ծնունդ»: Մեր հոգին շատ անգամներ է անցնում մարմնավորումից մարմնավորում՝ փոխելով «դեկորները»՝ ֆիզիկական մարմինները, երկրներ, ընտանիքներ և նույնիսկ՝ սեռը:

Այսպիսով՝ չկա մահ: Կա միայն մեր անմահ անհատականության՝ մեր Բարձրագույն Ես-ի վերամարմնավորումների հերթագայություն:

«Դուք՝ բոլորդ պետք է հանգեք այն գիտակցությանը, որ ձեր ներկա կյանքը միայն մի օղակն է ձեր մարմնավորումների ամբողջական շղթայի: Եվ միայն այն դեպքում, երբ կդադարեք մտածել միայն մեկ մարմնավորման չափանիշներով, կկարողանաք վեր կանգնել ձեր այդ կյանքի ունայնությունից և դիտարկել ժամանակի ավելի երկարատև հատվածները: Առօրյա ունայնությունը նահանջում է, երբ մտածում եք Հավերժության մասին: Եվ միայն մտքի և սրտի խաղաղեցման այդ կետից է, ոչ դուք ունակ կդառնաք ճիշտ գնահատելու ձեր շուրջը տեղի ունեցող ամեն ինչը» (Տեր Լանտո, 22 հունիսի, 2008 թ.):

Հիրավի, առանց հասկանալու մարդու այս և անցած կյանքերի արարքների փոխկապակցվածությունը արտաքին գիտակցությանը, հնարավոր չէ բացատրել, թե ինչու պետք է պահպանել բարոյական օրենքը և հետևել որոշակի բարոյական նորմերի ու կանոնների:

Յուրաքանչյուր անհատ պետք է հասնի իր արարքների և այդ արարքների հետևանքների միջև եղած կապի գիտակցմանը: Առանց այդ կապը հասկանալու՝ հնարավոր չէ բացատրել ձեր աշխարհում առկա շատ անարդարություններ, ինչպիսիք են ունեցվածքային անհավասարությունը, ոմանց կաստայական

արտոնություններն ու մյուսների աղքատությունը, ոմանց հյուծող ծանր տկարություններն ու մյուսների անթերի առողջությունը:

Ինչո՞ւ են ոմանք վաղաժամ մահանում, իսկ մյուսներն ապրում երկար կյանքով… Այդ ամենի պատճառները կարելի է գտնել միայն անցած կյանքերում, և երբեմն դրանք բացարձակապես հնարավոր չի լինում բացատրել ընթացիկ մարմնավորման և մեկ կյանքի հանգամանքների տեսանկյունից: (Տեր Հիսուս, 27 հունիսի, 2013 թ.).

«Պարզապես պետք է ամեն օր հիշեք, որ դուք միայն այն ֆիզիկական մարմինը չեք, որը տեսնում եք հայելու մեջ, և որ ձեր կյանքը չի ավարտվում ֆիզիկական մահով, այլ շարունակություն ունի: Եթե մշտապես ձեզ նույնացնեք ոչ թե ֆիզիկական մարմնի, այլ ձեր անմահ մասի հետ և մշտապես մտորեք այն մասին, որ ներկայում կատարված ձեր գործողություններն ազդում են ձեր ապագայի ու հաջորդ կյանքի հանգամանքների վրա, ապա ձեր էվոլյուցիոն ընթացքը ավելի ու ավելի բարեհաջող կլինի: Ցավոք սրտի, մարդկանց

մեծ մասը դեռևս չի հավատում վերամարմնավորմանը և ապրում է այնպես, կարծես առջևում միայն մահ է սպասվում» (Մեծն Աստվածային Ուղղորդիչ, 2-ը հուլիսի, 2006 թ.):

Եվ ահա մի վառ օրինակն այն բանի, թե ինչպես է ազդում վերամարմնավորման Օրենքը» (Կութհումի, 28 հունիսի, 2012 թ.).

Եթե գոյություն ունի ռեինկարնացիան, ինչո՞ւ մենք չենք հիշում մեր նախորդ վերամարմնավորումները:

Սա մեծ գթասրտություն է Աստծո կողմից: Ցավոք, մեր նախորդ կյանքերում մենք չափից դուրս հաճախակի ենք այնպիսի արարքներ գործել, որոնց համար հիմա մենք ոչ միայն կամաչեինք, այլ սարսափահար կլինեինք: Այդ գիտելիքը կարող էր մեզ վրա այնքան ուժեղ ազդել, որ մենք չէինք կարողանա գլուխ հանել ներկայիս մարմնավորման խնդիրներից:

Յուրաքանչյուր նոր մարմնավորման մեջ նոր պայմաններ ստանալով, մենք նոր փորձ ու նոր գիտելիքներ ենք ձեռք բերում, որպեսզի ավելի լավը, ավելի նուրբ, ավելի գթառատ և իմաստուն լինենք, որ կարողանանք լսել մեր Բարձրագույն Ես-ին և գիտակցության ու թրթիռների մակարդակով հասնենք Բարձր աշխարհների: Աստվածային արարածներին:

Բարձր աշխարհներում մեզ հարկավոր չի լինի ուտելիք և հագուստ, փող, շքեղության սառարկաներ, ավտոմեքենաներ ու տներ: Ուրեմն ի՞նչ է մնում:

«Մեր աշխարհում ձեզ հետ կարող են շարունակել մնալ միայն **ձեր Աստվածային հատկությունները: Անշահախնդրություն, նվիրվածություն, սեր, Աստվածային գթասրտություն, մաքրություն...** Աստվածային աշխարհում այնքան շատ են այն հատկանիշները, որ կարող եք ձեզ վերցնել, բայց որպեսզի կարողանաք տիրանալ այդ հատկանիշներին, **պետք է դրանք վաստակեք ձեր... ֆիզիկական կյանքում**» (Հզոր Հաղթանակ, 29 դեկտեմբերի, 2006 թ.):

Ամեն ինչ հասարակ ու արդարացի է կարգավորված Տիեզերքում: Մեզ մնում է միայն Աստծո կողմից սահմանված Օրենքներն ընդունելը և դրանց հետևելը, որպեսզի ներդաշնակորեն միաձուլվենք էվոլյուցիոն հոսքին և թռչենք կեցության ավելի ու ավելի բարձր մակարդակներ՝ հիացմունք և երանություն վայելելով:

Վերջաբան

Մենք Իմաստության Տիրակալների Ուսմունքի միայն այն փոքր մասի հետ շփվեցինք, որ մեր հոգատար Դեսպանորդները մեզ տվեցին Նոր Դարաշրջանի անցումային շրջանում: Անցումային շրջանը նման է վերանորոգման՝ փոշոտ պատուհաններ, աղտոտություն, անկարգություն, տհաճ բույրեր: Բայց մենք գիտենք, որ այդ ամբողջ քաոսը ժամանակավոր երևույթ է: Մենք Վեհապետների օգնությամբ ունենք մեր երազած ապագայի էսքիզները:

Իսկ Վեհապետների Ուսմունքը մեզ համար կողմնացույց է և քարտեզ, փարոս է և ուղեցույց աստղ: Ուսմունքը ուղղություն է տալիս, օգնում է կողմնորոշվելու, աջակցում է ու ոգևորում:

Մեզ ուղեկցում է Վեհապետ Լանելլոն.

«Վերջապես եկել է ժամանակը, որ ֆիզիկական ոլորտի փոխակերպություններն իրականանան Աստծո՝ այդ ժամանակին վերաբերվող Մտահղացմանը համապատասխան: Ընթացիկ դարաշրջանը փոխակերպություններ է պահանջում մարդկանց կյանքի բոլոր ոլորտներում: Եվ դա վերաբերվում է ոչ միայն հոգևոր ոլորտին, այլ նաև քաղաքականությանը, տնտեսությանը, կրթությանը, առողջապահությանը: Ամեն ինչ պետք է ձևափոխության ենթարկվի այն նոր էներգիաների ու նոր թրթռանքների ազդեցությամբ, որոնք իջնում են ֆիզիկական ոլորտ:

Եվ եթե նախկինում որոշակի փոխակերպությունների իրականացման համար պահանջվում էին հարյուրամյակներ, ապա այժմ անհրաժեշտ փոփոխությունները տեղի կունենան հաշված տարիների ընթացքում: Քանզի այդպիսին է ժամանակի պահանջը, և այդպիսին է Բարձրագույն Տիեզերական Խորհրդի կողմից Երկիր մոլորակի համար կայացված որոշումը: Ուստի ձգտե՛ք փոխել ինքներդ ձեզ և, որքան հնարավոր է, շո՛ւտ հրաժեշտ տվեք ձեր այն որակներին ու թերություններին, որոնք խանգարում են փոխակերպությունների Ուղով ձեր առաջընթացին: Միայն այնժամ, երբ կմաքրեք ինքներդ ձեզ անցյալի էներգիաներից և կձերբազատվեք կարմայական նստվածքներից, դուք կկարողանաք տեսնել այն խնդիրները, որոնք կանգնած են ձեր առջև և ենթակա են կենսագործման: Բայց, քանի դեռ ներքուստ

դիմադրում եք ու համառում՝ հետամուտ լինելով ձեր նախկին մտածողության կարծրատիպերին ու հին թերություններին, դուք չեք կարողանա ընթանալ դեպի այն Նոր Օրվա հիասքանչ հորիզոնները, որը կանխատեսված է ձեզ համար:

Մի՛ վախեցեք անկեղծորեն ինքներդ ձեզ, ձեր թերություններին նայելուց: Եթե իմ այս խոսքերը ձեզ գրգռում են, և ձեզ թվում է, թե դուք տեղով մարմնացյալ կատարելություն եք, և ոչ ոք, ներառյալ նաև Համբարձյալ Վեհապետները իրավունք չունի ձեզ խրատելու, ուրեմն ձեր Ուղու վրա ձեզ պակասում է ամենակարևոր հատկանիշը՝ Աստվածային խոնարհությունն ու հնազանդությունը: Ձեզ թվում է, թե դուք ձեր ճակատագրի տերն եք և կարող եք ինքներդ ձեզ հետ անել այն ամենն, ինչ ձեր խելքին փչում է: Սակայն դուք պետք է ըմբռնեք աստվածային տրամաբանությունը: Ձեր ՀԱՅՐ ԱՍՏՎԱԾ շատ հոգատար ու սիրող ծնող է: Երկնային Հոր հարցում ձեր բախտը շատ է բերել: Եվ քանի որ Նա շատ է սիրում ձեզ, ապա չի կարող թույլ տալ, որ այսուհետ ևս դուք շարունակեք ձեր գործողություններով վնաս հասցնել ձեր հոգուն: Հավատացե՛ք ձեր Հորը և հնազա՛նդ եղեք Նրա Կամքին:

Տիեզերական բոլորաշրջանների հերթագայությունը ժամանակի անխուսափելի պահանջն է: Ըստ այդմ՝ ինչը ձեր ներսում խանգարում է Մեծ Անցումին, պետք է հաղթահարվի հենց ձեր կողմից: Մի՛ համառեք: Միայն այնժամ, երբ ինքներդ ձեր ներսում որոշում կկայացնեք ոչ պետքական ամեն ինչից

ձերբազատվելու մասին, որն իր դարն ապրել է ու բացասական բնույթ է կրում, հետո կխնդրեք Աստծուց, որ Նա ազատի ձեզ ձեր կարմայական բեռից, ապա նոր միայն Համբարձյալ Դասերը կշտապեն ձեզ օգնության հասնել և օգնել, որ ազատվեք բացասական էներգիայի բազմադարյան նստվածքաշերտերից:

Իսկ եթե համառեք և շարունակեք մնալ ձեր թերություններով ու կործանարար սովորություններով, ապա ձեզ ոչ ոք չի կարողանա օգնել՝ ո՛չ Աստված, ո՛չ էլ որևէ մարդ:

Եկել է ոչ թե Աստծո մասին խոսելու, այլ ձեր կյանքերում Աստծո Օրենքին համապատասխան գործելու ժամանակը» (Վեհապետ Լանելլո, 24 դեկտեմբերի, 2006 թ.):

Գիրքն ավարտվեց: Բայց մենք չենք բաժանվում: Մենք նույն նավի՝ «Երկիր Մոլորակի» ուղևորներն ենք: Ո՞ւր կորչենք այս նավից, որը ուղիղ ընթացքով գնում է դեպի Նոր Դարաշրջան: Մենք դեռ երկար ենք լողալու նրանով: Հազարավոր ու միլիոնավոր տարիներ է տևելու այս նավարկությունը, և այդքան ժամանակ մեր հոգիները վերամարմնավորվելու են մեր մոլորակի վրա, որպեսզի ամեն անգամ նոր խնդիրներ լուծենք Հոգու Բարձունքներին հասնելու համար:

Չմոռանանք, որ մենք ենք մեր ճակատագրի նավապետները:

Համընթաց քամի մեր առագաստներին: Լրիվ առա՛ջ:

Գրականություն

1. КНИГА МУДРОСТИ. Послания Владык / Т.Н. Микушина. – Омск: Издательский Дом «СириуС», 2018.

2. Доктрина Высокой Нравственности // Нравственность – идеология Новой Эпохи. – МОД «За Нравственность!», 2015.

3. Микушина Т.Н. Национальная идея России. Концепция. – URL: https://нац-идея.рф.

4. Микушина Т.Н. Сказ о будущем. – URL: https://sirius-ru.net/skas-o-budutschem.htm.

ПУТЕШЕСТВИЕ В БУДУЩЕЕ

Т.Н. Микушина, Е.Ю. Ильина

Вёрстка и корректура – Ильина Е.Ю.
Обложка – Мартыненко Т.В.
Тех. редактор – Мартыненко Т.В.

Заказать книги почтой:
E-mail: sirius.book@gmail.com
Телефоны: (3812) 489-187,
+7-908-114-2478

Печатные и электронные книги
в Интернет-магазине “СИРИУС“:
poslanie-book.ru

Информация о книгах: **id.sirius-ru.net**

Авторские сайты “Сириус”:
sirius-ru.net и sirius-net.org

На обложке использованы
изображения с сайта Depositphotos

Подписано в печать 06.08.20. Формат 60x84 1/32.
Гарнитура Times New Roman, Calibri, Century Gothic.
Усл. печ. л. 3,95. Тираж 2000 экз. Заказ № ___

ООО «Омскбланкиздат», г. Омск,
ул. Орджоникидзе, 34, тел. +7 (3812) 212-131